Azg
armenian daily
7 ՅՈՒՆԻՍ 2002 ՈՒՐԲԱԹ 105 (2550)

Շվեդիայի խորհրդարանը Թուրքիայից եւ Ադրբեջանից պահանջել է Հայաստանի ապաշրջափակում

ՍՏՈԿՀՈԼՄ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հունիսի 5-ին Շվեդիայի խորհրդարանն ընդունել է օրինագիծ՝ պահանջելով Եվրամիությանը կոչ անել Թուրքիային եւ Ադրբեջանին ապաշրջափակել Հայաստանը: Այս մասին մասնավորապես հաղորդում է «Հանուն արդարության եւ ժողովրդավարության Եվրոպայի հայկական կոմիտեն» (նախկինում Հայ ազգային կոմիտե): Օրինագիծը, որի նախաձեռնողն է Շվեդիայի խորհրդարանի հայազգի անդամ Մուրադ Արթինը, սահմանում է, որ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից ՀՀ շրջափակումը կառուցողական չէ եւ հիմնավորված չէ միջազգային օրենքներով: Օրինագիծը նախապես արժանացել էր խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի հավանությանը: Վերջինիս ներկայացուցիչները հայտարարել էին, որ Եվրամիության անդամակցության ձգտող Թուրքիան ներգրավված է անօրինական եւ ռազմատենչ բռնարգելքի մեջ: Օրինագծով Թուրքիայից պահանջվում է հարգել միջազգային օրենքները եւ կոչ անում Ադրբեջանին ընդունել ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկները:

Հայաստանը եւ Բելառուսը զարկ կտան երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններին

Նախագահ Քոչարյանը երկօրյա պաշտոնական այցով ժամանեց Մինսկ

ԹԱԹՈՒԼ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
Մինսկ

Դժվար է գտնել աշխարհի 192 պետությունների եւս երկու նախագահների, որոնք ծնված լինեն միեւնույն տարում եւ միեւնույն օրը: 1954 թ. օգոստոսի վերջին օրը Ստեփանակերտում ծնվել է Ռոբերտ Քոչարյանը, Վիտեբսկի մարզի Կոզիս ավանում՝ Ալեքսանդր Լուկաշենկոն: «Ես եւ Ռոբերտ Սեդրակիչը ծնվել ենք նույն օրը, նույն տարում, բացարձակ հասակակիցներ ենք», մամուլի ասուլիսում հոգարտորեն ասաց Լուկաշենկոն: «Դա չի նշանակում, թե մենք միեւնույն կերդ ենք նայում բոլոր խնդիրներին: Անշուշտ, ոչ», շարունակեց Քոչարյանը:

BELTA-PHOTOLURE

Իրոք, Հայաստանը եւ Բելառուսը, լինելով խորհրդային մեծ պետության ժառանգներ, որոշ ոլորտներում, հատկապես տնտեսության ոլորտում խիստ տարբեր են: Բելառուսի տնտեսությունը պլանային է, մայրաքաղաք Մինսկը հիշեցնում է 1980-ական թթ. ժամանակներ: Սա, անշուշտ, չի նշանակում, որ Երեւանը եւ Մինսկը չեն կարող համագործակցել տնտեսական ոլորտում:

Տես էջ 2

Քաղաքական ուժերը վստահ են, որ մեծամասնական-համամասնական ընդունված հարաբերակցությունը կնպաստի կուսակցությունների դերի բարձրացմանը

ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը երեկ հայտարարեց, որ ուր կուսակցությունների (ՀՅԴ, ՀՈԱԿ, «Ազգային միաբանություն», ՀԿԿ, «Սոցիալիստական Հայաստան», ԱԻՄ, «Ազատություն», «21-րդ դար») միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում համատեղ հայտարարությամբ հանդես գալու՝ կուսակցությունների դերի բարձրացման (ինչի որ, ըստ ԱԻՄ նախագահի, քաղաքական կյանքում ապակուսակցականացման եւ անհատականացման գործընթաց է վերսկսվում) եւ խորհրդարանում համամասնական-մեծամասնական ընդունված (94/37) հարաբերակցության պահպանման վերաբերյալ:

ՀՈԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը հաստատեց, որ ԱԻՄ-ի հետ նման խոսակցություն եղել է. «ՀՈԱԿ-ը շարունակում է մնալ այն կարծիքին (այս կապակցությամբ նույնիսկ ժամանակին հանրապետական վարչությունը հանդես էր եկել հայտարարությամբ), որ ԱԺ-ի կողմից ընդունված փոփոխությունը (94/37) համապատասխանում է մեր քաղաքական շահերին, քանի որ շատ որոշակիորեն նպատակաուղղված է քաղաքական համակարգի հետագա զարգացմանը եւ կուսակցությունների դերի բարձրացմանը: Եւ մեր դիրքորոշման մեջ որեւէ փոփոխություն այս առումով չկա»:

Ինչ վերաբերում է ԱԻՄ-ի՝ համատեղ հայտարարություն անելու առաջարկին, ապա ՀՈԱԿ ատենապետի խոսքերով, իրենց համար կարեւոր է, թե որ կազմակերպությունները կմիանան այդ հայտարարությանը.

Տես էջ 2

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Բուշին խնդրել են Կոնգրեսին ներկայացնել օգնության ծրագիրը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Հունիսի 5-ին ԱՄՆ կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնը եւ Ջո Նոլենբերգը խնդրել են նախագահ Բուշին Կոնգրեսին ներկայացնել Ադրբեջանին հատկացվող ռազմական օգնության մանրամասն ծրագիրը: Բուշին հասցեագրված նամակում կոնգրեսականները մտահոգություն են հայտնում Հայաստանի դեմ պատերազմական գործողություններ սկսելու մասին Ադրբեջանի նախագահ Ալիեւի վերջին հոետորական հայտարարությունների առթիվ: Եվ այս առումով խիստ կարեւոր է համարվում Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ ռազմական հավասարակշռություն պահպանելուն ուղղված ԱՄՆ վարչակազմի քաղաքականությունը: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, վերջերս նախագահ Ալիեւը՝ ինքնադատելով Մինսկի խմբի չեզոք դիրքորոշումը, հայտարարել է, որ եթե այն սկզբունքորեն չփոխվի, ապա Ադրբեջանը կդիմի իր հողերի ազատագրման ռազմական տարբերակին:

Վաշինգտոնը հրապարակել է Ադրբեջանի հետ ռազմական համագործակցության սկզբունքները

ԲԱԿՈՒ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ԱՄՆ-ը մտադիր է իր ռազմական համագործակցությունը Ադրբեջանի հետ իրականացնել չորս ուղղություններով: Այս մասին Բաքվի «525» թերթին հայտարարել է Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռոս Վիլսոնը: Ըստ նրա, այդ բնագավառում Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի համագործակցության ասպեկտները քննարկվել են Բաքվում Միացյալ Նահանգների զինվորական պատվիրակության մարտին կատարած այցի ժամանակ: Այն կգարգանա ծովային եւ օդային սահմանների անվտանգության ապահովման, խաղաղարարական ուժերի համագործակցության, ինչպես նաեւ Ադրբեջանի սպաներին անգլերենի ուսուցման բնագավառում: Ըստ Բաքվում ԱՄՆ դիվանագիտական առաքելության ղեկավարի, բոլոր այդ հարցերի համար իր երկրի կառավարությունը մտադիր է հատկացնել 4 մլն. դոլար, այդ թվում սպաներին անգլերենի ուսուցման համար՝ 750 հազար դոլար: «Այդ ամենը չի հուշում, որ մենք մտադիր ենք մեր ռազմակայանները տեղակայել Ադրբեջանում, այստեղ առկա է սոսկ երկու պետությունների ռազմական համագործակցության զարգացում», նշել է դեսպանը:

Գագիկ Մարկոսյանը՝ ՀԱԷԿ-ի տնօրեն

ԵՐԵՎԱՆ, 6 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի որոշմամբ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն է նշանակվել Գագիկ Մարկոսյանը: Այս մասին հայտնեցին ՀՀ էներգետիկայի նախարարության Լրատվության եւ հասարակության հետ կապի վարչությունից: Գագիկ Մարկոսյանը 1974-ից աշխատել է ՀԱԷԿ-ում: 2000 թ.-ին նշանակվել է ՀԱԷԿ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, 2002 թվականի ապրիլի 1-ին՝ գլխավոր տնօրենի պաշտոնակատար:

Իրավական լուրջ վտանգ Թուրքիայի համար

Թուրքիան կարող է միջազգային իրավական լուրջ խնդիրների առաջ կանգնել, եթե հունիսի 24-ից հետո փորձի խախտել Կիպրոսի օդային տարածքը, հաղորդում է Նիկոսիայից մեր թղթակից Ջորջ Տեր-Բարթողը: «Այդ թվականից սկսած անվտանգ օդագնացության «Եվրակոնտրոլ» եվրոպական կազմակերպությունը, ըստ Բրյուսելի լավատեղյակ աղբյուրների», գրում է Տեր-Բարթողը, ստանձնելու է Կիպրոսի օդային տարածքի համընդհանուր հսկողությունը եւ իրավունք է ձեռք բերելու դատական գործ հարուցել Թուրքիայի դեմ, եթե վերջինս առանց թույլտվության օգտագործի կղզու գրավյալ հյուսիսային մասը»:

Մեջբերելով այս հատվածը «Սայփրս մեյլ» անգլիատառ օրաթերթից, մեր թղթակիցն ավելացնում է, որ «Եվրակոնտրոլը» հիմնադրվել է 1960 թ.-ին՝ համայն Եվրոպայում օդագնացության համընդհանուր հսկողության մթնոլորտ ստեղծելու նպատակով, եւ 1968 թ.-ից ի վեր անվտանգ օդագնացության երաշխավորված ծառայություն է մատուցել 30 եվրոպական երկրների: Թուրքիան համաեվրոպական համաձայնության այդ 30 երկրներից մեկը լինելով, բնականաբար պետք է ենթարկվի ընդհանուրի որոշած դրույթներին: Կիպրոսի օդային տարածքի ամեն մի խախտում առիթ է տալու պատասխանատվության կանչել Թուրքիային եվրոպական բարձրագույն դատական ատյաններում: Իսկ պատասխանատվության կանչելու իրավունք ունենալու են ինչպես «Եվրակոնտրոլը», այնպես էլ Կիպրոսի կառավարությունը եւ նույնիսկ կիպրական օդային իշխանությունները:

Իսրայելցիք վերագրավեցին եւ վերստին ավերեցին Ռամալլան

Ինչպես նախատեսվում էր, ի՞պատասխան նախորդ օրը Իսրայելի Ա-ֆուլա քաղաքի մոտ պաղեստինցիների ահաբեկչական գործողության, որից 17 մարդ սպանվել էր (որոնցից 13-ը զինվոր) եւ շուրջ 30-ը վիրավորվել, իսրայելյան հրասայլերը երեկ առավոտ կարճատեւ, եւ ավելի հետո երկարատեւ գրավման ենթարկեցին Ռամալլա քաղաքը: Քաղաքի փողոցները, տներն ու հաստատությունները նորից ավերածության ենթարկվեցին, բայց ամենամեծ ավերածությունը տեղի ունեցավ Պաղեստինյան ինքնավարության առաջնորդ Յասեր Արաֆաթի նստավայրում: Շենքի մի ամբողջ հատվածը, որտեղ տեղավորված էր պաղեստինյան հետախուզական ծառայությունը, գետնին հավասարվեց: Զոհվեց թիկնապահներից մեկը: Երեկոյան, հրասայլերի մեկնելուց հետո Արաֆաթը դուրս գալով ապաստարանից հայտարարեց. «Իսրայելը ֆաշիստական քաղաքականություն է վարում պաղեստինցիների դեմ: Նրան չի հաջողվի ընկճել մեզ»: Մեկնաբանների կարծիքով, Արաֆաթի կենտրոնակայանը թիրախ վերցնելու վարչապետ Շարոնի նպատակն ընդգծելն է, որ Ա-բու Ամմարը (պաղեստինցիք այսպես են կոչում Արաֆաթին) չի կարող վերահսկել իրավիճակը եւ պահն է նրան փոխարինելու:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիացիների հեղինակությունը սասանված է

Ճապոնիայում եւ Հարավային Կորեայում ընթացող ֆուտբոլի աշխարհի 17-րդ առաջնությունում սկսվել են խմբային մրցաշարի 2-րդ տուրի հանդիպումները: Գերմանիայի հավաքականից հետո ժամկետից շուտ 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճելու հնարավորություն էր ընձեռվել Դանիայի հավաքականին: Սակայն գերմանացիների նման, դանիացիներն էլ չկարողացան կատարել առաջադրանքը: Հանդուգն սենեգալցիները, որոնք մեկնարկում խոշոր անակնկալ էին մատուցել՝ պարտության մատնելով աշխարհի չեմպիոն ֆրանսիացիներին, այս անգամ էլ արժանի բարձրության վրա գտնվեցին: Աֆրիկյան ֆուտբոլի վարկանիշը բարձր պահեց նաեւ Կամերունի հավաքականը, որը թեեւ նվազագույն հաշվով հաղթեց Սաուդյան Արաբիայի հավաքականին, սակայն այդ հաջողության շնորհիվ հիանալի հնարավորություններ է պահպանում շարունակելու պայքարը: Իսկ ահա աշխարհի չեմպիոնի հեղինակությունը սասանված է, իսկ վիճակն օրհասական: Ֆրանսիացիները կարող են ժամկետից շուտ վայր դնել չեմպիոնի լիազորությունները, ինչը թիմի բազմահազար երկրպագուների համար մեծ ողբերգություն կլինի: Ընդհանրապես, խմբերում իրավիճակը բավական խճճված է, ինչը խոստանում է անհաշտ մրցակցություն առաջիկա հանդիպումներում:

AP-PHOTOLURE

ԸՆԹԱՑԻԿ

ՄՐՑՊԵՏԱԿԱՆ

Հայաստանը եւ Բելառուսը զարկ կտան երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններին

Սկիզբը էջ 1

Նախագահ Քոչարյանի երկօրյա պաշտոնական այցը Բելառուս առաջին հերթին նպաստակ է հետապնդում զարգացնել եւ ընդլայնել հայ-բելառուսական առեւտրատնտեսական հարաբերությունները: Երեք տարի առաջ, հայ-բելառուսական առեւտրատնտեսական հարաբերություններ չեն եղել, ավելի ծիշտ՝ եղել են զրոյականից փոքր-ինչ ավելի: «Այսօրվա ցուցանիշները մեզ ուրախացնում են», երկու պետությունների նախագահների համատեղ մամլո ասուլիսում ասաց Լուկաշենկոն: 1999 թ. սկզբից որոշակի առաջընթաց է արձանագրվել առեւտրատնտեսական հարաբերություններում: 2001 թ. Հայաստանի եւ Բելառուսի միջեւ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 2,4 մլն ԱՄՆ դոլար, որից արտահանումը՝ 1,4 մլն, ներմուծումը՝ 1 մլն: Երկու պետությունների միջեւ առեւտրատնտեսական շրջանառության ներկայիս մակարդակը չի համապատասխանում առկա տնտեսական ներուժին. սա շեշտեցին թե՛ Լուկաշենկոն, թե՛ Քոչարյանը: Ի դեպ, այս տարվա սեպտեմբերին Բելառուսը կմասնակցի Հայաստանի գյուղատնտեսական ապրանքների ցուցահանդեսին, իսկ հոկտեմբերին Հայաստանը կմասնակցի Մինսկում կայանալիք բիզնես-ֆորումին:

Լուկաշենկո-Քոչարյան առանձնազրույցում, որը կայացավ երեկ Բելառուսի նախագահի նստավայրի «Երկնագույն» սրահում եւ շարունակվեց շուրջ երկու ժամ, հիմնական շեշտը դրվել է հայ-բելառուսական առեւտրատնտեսական համագործակցության վրա: «Մենք շարունակեցինք երկխոսությունը: Հիշում եք, 2001 թ. մայիսին պաշտոնական այցով Հայաստանում էի, երեւանում որոշվել էին համագործակցության հիմնական ուղղությունները», ասաց Լուկաշենկոն:

Հայաստանը հիմնականում Բելառուս է արտահանում կոնյակ եւ կաուչուկ, ներմուծում դեղորայք, պոմիդոր: 2002 թ. առաջին երեք ամիսներին 2001 թ. նույն ժամանակահատվածի համեմատ Հայաստանից Բելառուս արտահանումն աճել է ավելի քան երկու անգամ: Ռոբերտ Քոչարյանի կարծիքով, հայ-բելառուսական ապրանքաշրջանառությունը հնարավոր է ամեն տարի կրկնապատկել:

Երեկ, Լուկաշենկո-Քոչարյան առանձնազրույցից հետո, տեղի ունեցավ հայ-բելառուսական հանդիպում ընդլայնված կազմով, ապա համատեղ փաստաթղթերի ստորագրման արարողություն: Ստորագրվեցին համաձայնագիր Հայաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ՝ Հայաստանի եւ Բելառուսի քաղաքացիների առանց այցագրերի (վիզաների) փոխայցելությունների մասին, արձանագրություն Հայաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ ազատ առեւտրի մասին: Մեկ այլ համաձայնագիր ստորագրվեց Բելառուսի պաշտպանության նախարարությունում՝ Հայաստանի եւ Բելառուսի կառավարությունների միջեւ, տպառազինության եւ ռազմական տեխնիկայի փոխադարձ մատակարարումների մասին: Թե ինչ է նշանակում այս համաձայնագիրը, դժվարանում ենք ասել, երկու նախագահներին էլ հարց չուղղվեց: Փոխարենը՝ Լուկաշենկոյին եւ Քոչարյանին հարց ուղղվեց Ռուսաստան-ՆԱՏՕ նոր հարաբերությունների մասին: «Կաղրենք՝ կտեսնենք: Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերություններում դեռեւս ոչինչ չի փոխվել: Կա ինչ-որ պայմանագիր, բայց ՌԴ-ն ՆԱՏՕ չի մտնում, եւ ՌԴ-ին ՆԱՏՕ-ից չեն կանչում: ՌԴ-ն ՆԱՏՕ-ի Պրահայի գագաթաժողովին չի մասնակցելու: Թվում է, ՌԴ-ն եւ ՆԱՏՕ-ն վերջերս ամուսնացել են, բայց ինելու են առանձին: Ինչո՞ւ: Որովհետեւ ՆԱՏՕ-ում չափից շատ հարցեր լուծվում են հակառակ Ռուսաստանի շահերի», ասաց Լուկաշենկոն: Այլ էր Քոչարյանի պարզաբանումը. «Հայաստանը շահագրգիռ է, որ Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի եւ ՌԴ-ի շահերը չբախվեն, դրա հետեւանքով չառաջանան բաժանարար գծեր: ՆԱՏՕ-ՌԴ համագործակցությանը, սկզբունքորեն, մենք դրական ենք նայում: Ինչպե՞ս կաշխատի ՆԱՏՕ-ՌԴ նոր ֆորմատը, ժամանակը ցույց կտա: Հակասությունները, որոնք կային, սկզբունքորեն մնացել են: Պարզապես կա մեխանիզմ, որը թույլ է տալիս նստել բանակցությունների սեղանի շուրջ, քննարկել, հարթել հակասությունները»:

Օրվա երկրորդ կեսին ՀՀ նախագահի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Մինսկում Հայաստանի դեսպանությանը հատկացված հողատարածք, տեղադրվեց դեսպանության «առաջին քարը», ապա Ռ. Քոչարյանը ծաղկեպսակ դրեց Հաղթանակի հուշարձանին: Երեկոյան ԱՊՀ գործադիր կոմիտեի շենքում կազմակերպվեց հայկական սննդամթերքների ցուցահանդես:

Այսօր Ռ. Քոչարյանը կայցելի «Բելոեսուրսի» կոնցեռն, Մինսկի տրակտորի գործարան, «Խաչին» հուշահամալիր, կհանդիպի Բելառուսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Քաղաքական ուժերը վստահ են, որ ...

Սկիզբը էջ 1

«Քանի որ մեր ավանդույթներից չի բխում ամեն մեկի հետ հայտարարություն անել: Խոսքը, ի դեպ, ԱԻՄ-ին չի վերաբերում: Վերջինիս հետ մենք պատրաստ ենք այդ հարցում հանդես գալ համատեղ հայտարարությամբ: Բանն այն է, որ Պ. Հայրիկյանը երեկ հնչեցրեց կազմակերպությունների անուններ, որոնք ժամանակին, եւ խորապես համոզված եմ, որ հիմա եւս շարունակում են այնպես անել, որ ոչ միայն կուսակցությունների դերը նվազի, այլ ընդհանրապես քաղաքական համակարգը չկայանա: Անսկզբունքային կլինի որեւէ հարցի վերաբերյալ մեր սոորագրությունը դնել նման կարգի ուժերի հետ: Չեմ ուզենա մասնավորեցնել, կարծում եմ, թե իրենք իրենց կճանաչեն, թե ժողովուրդը», մեկնաբանեց Ռ. Միրզախանյանը:

ՀՈԱԿ ատենապետը նշեց, որ երկրում ապակուսակցականացման գործընթացի վտանգ չի տեսնում եւ նման մտավախություն չունի: Սակայն, ըստ նրա, ակնհայտ է, որ տեղի է ունենում որոշակի քաղաքական պայքար այն ուժերի միջեւ, որոնք իրենց էությամբ ապակուսակցական են ու նրանցով է պայմանավորված ներկա ԱԺ-ի մակարդակն ու որակը, եւ նրանց միջեւ, որոնք ուզում են խորհրդարանը դարձնել քաղաքական ինստիտուտ: «Դա պայքար է, եւ նորություն չէ, այդպես եղել է միշտ, այդպես է այսօր»,

«Ազգային միաբանություն» կուսակցության ղեկավար Արտաշես Գեղամյանն ԱԻՄ նախագահի հարցադրումն ու մտահոգությունն ընդունելի է համարում: «Այն համամասնությունը (94/37), որ ամրագրված է ԱԺ-ի կողմից ընդունված օրենքում, պետք է պահպանվի, դա կմեղմի այն վտանգավոր գործընթացները, որոնց ականատեսը եւ որոնց դառը պտուղները քաղեցինք 1999 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում: Եթե խախտվեն այս պայմանավորվածությունները, ապա հերթական խորհրդարանը կլինի ավելի ապաքաղաքականացված, քան գործող ԱԺ-ն է: Այս առումով մեր տեսակետները համընկնում են», նշեց Ա. Գեղամյանը, նկատելով, որ նշված համամասնության պահպանումն ավելի շատ կնպաստի կուսակցությունների պատասխանատվության բարձրացմանը:

ՀԿԿ խմբակցության ղեկավար Ֆրունզե Խառատյանը նախ ժխտեց, որ ԱԻՄ-ի հետ նման պայմանավորվածություն կամ համաձայնություն եղել է: «ԱԻՄ-ի հետ ՀԿԿ-ն որեւէ բանակցություն չի վարել որեւէ հարցում, եւ ոչ էլ կարող է համատեղ հայտարարությամբ հանդես գալ», ասաց նա:

Ֆ. Խառատյանը նշեց, որ ՀԿԿ-ն առաջարկում էր, որպեսզի խորհրդարանն ընդհանրապես ամբողջությամբ համամասնական սկզբունքով ընտրվեր, բայց հաշվի առնելով, որ բոլոր քաղաքական ուժերը համաձայնության էին եկել 94/37 հարաբերակցության շուրջ, իրենք եւս համաձայնվեցին այս հարցում: Նրանց, ովքեր ներկայումս շահագրգռված են մեծամասնական տեղերի ավելացմամբ, Ֆ. Խառատյանը լուրջ չի համարում: Ըստ խմբակցության ղեկավարի, անկուսակցական պատգամավորները ԱԺ-ի ամենաթույլ զանգվածն են փոփոխությունների ենթարկման տեսակետից: Ինչ վերաբերում է ապակուսակցականացման գործընթացին, ապա Ֆ. Խառատյանը նման մտահոգություն ունի:

ՀՅՊ ԳՄ անդամ Գեղամ Սանուկյանը հայտնեց, որ ԱԻՄ-ի հետ որեւէ նման պայմանավորվածություն ծեռք չի բերվել, եւ այդ ուղղությամբ բանակցություններ նույնպես չեն եղել:

Նշենք, որ ՀՅՊ-ն նույնպես կողմ է ընդունված 94/37 հարաբերակցությանը, իսկ ՀՅՊ խմբակցության անդամ Վահան Հովհաննիսյանն օրեր առաջ ԱԺ 60 պատգամավորների կողմից մեծամասնական տեղերն ավելացնելու նախաձեռնությունը համարել էր քաղաքական կոռուպցիայի ամենացայտուն երեւույթ:

Մահազդ

Լեւոն, Նինա, Աստղիկ եւ Սվետլանա Գեւորգյանները խոր վշտով հայտնում են իրենց սիրելի մոր

ԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

մահը:

Հուղարկավորությունը այսօր, հունիսի 7-ին, ժամը 15:00-ին, Գայդարի փողոց, շենք 3, բնակարան 22 հասցեից:

Հայաստանի ժուռնալիստների միության վարչությունը եւ Ժուռնալիստի տան աշխատակազմը խորապես ցավակցում են միության նախագահ Աստղիկ Գեւորգյանին սիրելի մոր մահվան կապակցությամբ:

Նույն կապակցությամբ «Ազգ» օրաթերթի խմբագրակազմն ու տնօրենությունը վշտակցում են տիկին Աստղիկ Գեւորգյանին եւ հանգուցյալի մյուս բոլոր հարազատներին:

Բնակարանամուտ Կոտայքի մարզում

«Արդեն հիմնավոր ենք մեր հայրենի հողում: Կարեւորը տունն է, որ ունեցանք, այստեղ ապրելու չենք մտածի Հայաստանը լքելու մասին»:

Բյուրեղավանում եւ Քանաքեռավանում բնակարանամուտի երկար են սպասել: 13 տարի վագոն-տնակում ապրողի համար սեփական տուն ունենալը երազանք էր, որն իրականացավ շնորհիվ Փախստականների նորվեգական խորհրդի: 9 ընտանիք Քանաքեռավանում եւ 20-ը Բյուրեղավանում օրերս տան տեր դարձան:



Երկար սպասված բնակարանամուտն իսկույն տոնի էր վերածվել, որին մասնակցեց նաեւ Փախստականների նորվեգական խորհրդի երեւանյան գրասենյակի ղեկավար Թիմ Սբրեյթը: Նա փախստականներին հանձնեց նորակառույց տների բանալիները:

Բնակարանամուտ տոնողները շնորհակալության խոսքեր էին հայտնում նշելով, թե 13 տարի այս օրվան են սպասել: Ոմանք էլ չհախնդիրը, անցյալ է:

Սա Փախստականների նորվեգական խորհրդի իրականացրած առաջին ծրագիրը չէ Կոտայքի մարզում: ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն խորհրդի երեւանյան գրասենյակի հետ համատեղ ջանքերով 95 առանձնատուն կառուցվել է Արզնիում: Փախստականների նորվեգական խորհուրդը եւս 75 ընտանիքի նոր Արտամետում է բնակարանով ապահովել:

Թիմ Սբրեյթից տեղեկացանք, որ արդեն հաստատվել է նոր ծրագիր Բյուրեղավանում նախատեսվում է 25 տուն կառուցել:

Ա. Հ.

«Ազգ» օրաթերթի խմբագրությանը

Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնյաները բազմիցս պաշտոնապես շարադրել ու հայտարարել են ԻԻՀ դիրքորոշումը Իսրայելի հանդեպ:

Իրանի Իսլամական Հանրապետությունը երբեք, ոչ պատերազմի ժամանակ եւ ոչ էլ ներկայումս, բանակցություններ կամ տնտեսական գործարք չի կատարել Իսրայելի հետ, ուստի գաղտնի հարաբերությունների եւ իրանցի պաշտոնյաների վարած գաղտնի բանակցությունների մասին հրապարակված նյութերը չեն համապատասխանում իրականությանը եւ բացարձակ կեղծ են:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից գնացել է «Նեզավիսիմայա գազետայի» խմբագրությանը: Բացի այդ, քաղաքականությունն այն ասպարեզն է, որտեղ կասկածելը միշտ էլ արդարացված է: Աշխարհն այնքիսի բաներ է ականատես եղել եւ լինում, որ լրագրողներիս ոչ ոք չի կարող մեղադրել կասկածամտության մեջ:

Խմբ. կողմից– Վերեւում նույնությամբ հրապարակելով Իրանի դեսպանության հերքումը, չենք կարող մեր տարակուսանքը չհայտնել պատասխանի խրատական տոնի կապակցությամբ: Մեր հրատարակած վերոհիշյալ հոդվածում առնվազն 3 անգամ նշված է, որ այն քաղված է ռուսական «Նեզավիսիմայա գազետա» հայտնի թերթից: Հետեւաբար, դա մեր հորինածը չէ: Երկրորդ մեզ շատ է հետաքրքրում, թե նմանօրինակ հերքում, ասենք Մոսկվայում Իրանի դեսպանության կողմից գնացե՞լ է «Նեզավիսիմայա գազետայի» խմբագրությանը: Բացի այդ, քաղաքականությունն այն ասպարեզն է, որտեղ կասկածելը միշտ էլ արդարացված է: Աշխարհն այնքիսի բաներ է ականատես եղել եւ լինում, որ լրագրողներիս ոչ ոք չի կարող մեղադրել կասկածամտության մեջ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող. 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՍՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են: համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
-AZG- DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Քննարկում

Քաղաքացիական ազգային նախաձեռնությունը «Հայաստան-սփյուռք» մշակութային ընդհանրություններ եւ տարբերություններ» թեմայով գիտաժողով կանցկացնի 2002 թ. նոյեմբերին: Իսկ մինչ այդ կքննարկվեն երեք կարեւոր հարցեր. հայերի էթնիկ ինքնապահպանության հարցերը, կրոնի եւ եկեղեցու դերը հայ ժողովրդի ինքնության եւ ձեւավորման ու պահպանման գործում, ազգային մշակութային արժեքների պահպանվածության աստիճանն ու դրսեւորման ձեւերը Հայաստանում եւ սփյուռքում: Նախատեսվում է քննարկումների եւ գիտաժողովի նյութերով առաջարկությունների փաթեթ ձեւավորել հայ ժողովրդի տարբեր գաղթօջախների միջեւ խորացող մշակութային մեկուսացումը կասեցնելու եւ ընդհանրությունները խթանելու համար:

«Հայերի էթնիկ ինքնապահպանության հարցերը» թեմայով սեմինարը տեղի ունեցավ երեկ, որին հրավիրված էին ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության, իրավունքի եւ փիլիսոփայության, գրականության ինստիտուտների գիտաշխատողներ, ԵՊՀ դասախոսներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ: Ազգագրագետ Լեւոն Աբրահամյանի ելույթը նվիրված էր դիասպորայի հայկական մոդելի վերլուծմանը: Նա նշեց, որ 1915 թ. եղեռնից հետո գաղթօջախ եւ սփյուռք տարբերությունները ընդգծվեցին: Այսպես օրինակ, Մ. Նահանգների հայերն ավելի հեշտ են կորցնում հայրենիքի հետ ունեցած կապը: Հայրենիքի գաղափարը դառնում է սիմվոլիկ, Հայաստանը սիմվոլիկ հայրենիք է դառնում, իսկ իրականը՝ կորցրած Արեւմտյան Հայաստանը: Պատահական չէ, որ այսօր հայագիտության մեջ հակադրվում են հայաստանյան «ուխտապատեստ» եւ ամերիկյան «ուխտանենգ» հայագիտական մոտեցումները: Նրա համոզմամբ, սփյուռքում հայ էթնոսի վերացման տագնապ է նշմարվում, ուստի անհրաժեշտ է ստեղծել ոչ եկեղեցական կառույցներ՝ հայապահպանման դժվարությունները վերացնելու համար: Հայաստանում օրեցօր փոխվում է հասարակության մտածելակերպը, որը կարեւոր գործոն է սփյուռքահայերին մերձենալու իմաստով:

Արեւմտահայ եւ արեւելահայ գրական ընդհանրությունների եւ տարբերությունների մասին խոսեց գրականագետ Գրիգոր Հակոբյանը, շեշտելով, որ առ այսօր այն դույզն-ինչ չի ուսումնասիրվել: Հայ գրողները տարբեր ժամանակաշրջաններում անդրադարձել են թեմայի ուսումնասիրմանը՝ փորձելով վեր հանել միմյանց բաժանող ու միավորող իրողությունները եւ ստեղծել մեկ միասնական գրական մշակույթ: Ցավոք, խորհրդային տարիներին հիմնովին փոխվեց հայ վերնախավի մեծ հատվածի մտածելակերպը եւ խորհրդային գաղափարախոսությունն անդունդ ստեղծեց Հայաստանի ու սփյուռքի միջեւ: Ի տարբերություն մինչխորհրդային ժամանակների, հայաստանցիներն այսօր դժվար են հասկանում արեւմտահայերեն, դպրոցական դասագրքերը հագեցած չեն արեւմտահայ գրողների եւ արեւմտահայերենի մասին բավարար գիտելիքներով: Արեւմտահայերենի պահպանումը Հայաստանում կարեւորելով, նա ծայրահեղություն համարեց արեւելահայ գրողների երկերի փոխադրումն արեւմտահայերենի, կամ հակառակը:

Վենետիկի համալսարանի պրոֆեսոր հայր Լեւոն Զեքիյանն անդրադարձավ արեւմտահայ եւ արեւելահայ լեզուների զարգացման խնդրին, նշելով, որ Միջին Արեւելքի հայ գաղութներում լեզվական տարածայնություններն ամենից ուժգին են արտահայտվել: Արեւելահայերենն արագ է փոփոխվել, քանի որ ավելի կանոնակարգված է եւ այսօր էլ հեռանում է արեւմտահայերենից: Կարեւորելով բառապաշարի հարստացումը՝ նա ողջունեց դպրոցներում գրաբարի դասավանդում սկսելու պրոֆ. Ջահուկյանի առաջարկը, որը կնպաստի ընդհանուր բառապաշարի կայունացմանը: Իսկ միասնական գրական լեզու ստեղծելու համար, ըստ նրա, ծշմարիտ քայլ է աստիճանաբար դասական ուղղագրության անցնելը:

Հայոց պատմամշակութային առանձնահատկությունների վերաբերյալ ուշագրավ եւ չափազանց հետաքրքրական էր պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանի պատմական համառոտ ակնարկը: V դ. ի վեր, Արշակունյաց թագավորության կործանումից հետո հայ ժողովուրդն ապրեց տարբեր քաղաքական տիրապետությունների տակ, որոնք թելադրում էին իրենց մշակույթը: 19-րդ դ. վերջին Հովսեփ էմինի ազգանվեր ջանքերով ջարդվեց հատվածական հայրենիքի հոգեբանությունը, եւ ստեղծվեց միասնական հայրենիքի գաղափարը, սակայն 1915 թ. եղեռնը վերջ դրեց այդ մերձեցմանը, եւ հայ ժողովրդի երկու հատվածները նետվեցին տարբեր անդունդներ: Հայաստանի եւ սփյուռքի մշակույթները տարբերակվեցին, քանի որ խորհրդային համակարգը տարբ դրեց ազգային հարցերի վրա: Պրոֆեսոր Հովհաննիսյանը մատնանշեց, որ Մեսրոպ Մաշտոցից հետո Մխիթար աբբան ըմբռնեց հայ ժողովրդի գոյատեւման գաղտնիքը՝ մշակութապես հզորանալը եւ մեծ գործունեություն ծավալեց այդ ուղղությամբ:

Մասնակիցներին հուզող հարցերն ու խնդիրներն անչափ շատ էին, իսկ քննարկված հարցերն իրականություն դարձնելու ակնկալիքը՝ մեծ, քանի որ այս հարցերը մինչ այսօր կարոտ են լուրջ ուսումնասիրության: Հավելենք, որ քննարկումների ժամանակ ներկայացված ելույթները, արտահայտված մտքերը մինչեւ գիտաժողով լույս կտեսնեն ժողովածուով:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍԵՄԻՆԱՐ

Համահայկական մշակույթ ստեղծելու ակնկալիքով



ՖՈՏՈԼՈՒՐ

Ինչպես ենք ապրում

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Քննարկում են Հայաստանում ժուռնալիստիկայի հիմնախնդիրներն ու խոչընդոտները

Մամուլի եւ տեղեկատվության ազատության, հեռաքննական լրագրության, ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի եւ այդ բնագավառում նոր տեխնոլոգիաների ներդրման հարցերն են քննարկվում Երեւանի պետական համալսարանի Եղիշե Չարենցի անվան դահլիճում հունիսի 5-7-ն անցկացվող «Ժուռնալիստիկան Հայաստանում. Արդի հիմնախնդիրներ եւ խոչընդոտներ» ընդհանուր խորագիրը կրող միջազգային գիտաժողովի ընթացքում, որը կազմակերպել են Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը եւ ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Միդլսեքս համայնքային քոլեջի տնտեսական եւ համայնքային զարգացման բաժինը:

Գիտաժողովը, որն ԱՄՆ-ի պետդեպարտամենտի կրթության եւ մշակութային գործերի բյուրոյի նորանկախ պետությունների համալսարանական ծրագրի շրջանակում իրականացվող կրթական միջոցառումներից է, նպաստակ է հետապնդում ԱՄՆ-ի եւ Հայաստանի Հանրապետության ժուռնալիստիկայի դասախոսներին եւ լրագրողներին հնարավորություն ընձեռել միմյանց ծանոթացնելու երկու երկրների արդի լրագրության պրակտիկային, կարծիքներ փոխանակել եւ ուղիներ որոնել ազատ խոսքի հրատարակումներում պահպանելու որոշակի մակարդակ:

Չորեքշաբթի օրը պետական համալսարանի ռեկտոր Ադիկ Սարգսյանի, Միդլսեքս համայնքային քոլեջի պրոռեկտոր Ֆրենկ Ֆոլսեթայի եւ ԱՄՆ դեսպանատան հանրային կապերի պատասխանատու Ջոն Բալյանի բացման խոսքերից հետո ելույթներ ունեցան 50-ամյա փորձ ունեցող հրապարակախոս Մարգո Ղուկասյանը («Հնի եւ նորի սահմանագծում»), Միդլսեքս համայնքային քոլեջի դասախոս Ռոբերտ Մատորին («Ի՞նչ է մամուլի ազատությունը») եւ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը («Նոր մամուլի կայացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում»):

Հինգշաբթի օրվա ծրագրում ընդգրկված էին «Բոստոն գլոբ» թերթի լրագրող-խմբագիր, Պուլիցերյան մրցանակի կրկնակի դափնեկիր, ավելի քան 30-ամյա լրագրողական փորձ ունեցող Սթիվեն Քյուրչյանի, հեռաքննող լրագրողների ընկերակցությունից Սառա Պետրոսյանի, ԱՄՆ-ի WBZ-AM ռադիոկայանի լրագրող Պոլ Սալիվանի, Բոստոնի ռադիոյում 25 տարվա փորձ ունեցող Հիլարի Սթիվենսի, ԵՊՀ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Սուսեղ Հովսեփյանի, Հայաստանում «Այրեմ Պրոմեդիա» ծրագրերի ղեկավար Պիտեր Այմսթաղտի, Գյումրու «Ասպարեզ» լրագրողական ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանի, ամերիկյան «Լոուել սան» օրաթերթի խմբագիր, Թոմ Զուտպայի ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս Լիանա Սայադյանի եւ Երեւանի Մամուլի ազգային ակումբի փորձագետ Սեսրոպ Հարությունյանի զեկուցումները:

Այսօր ելույթ կունենան Լոուելի հեռահաղորդակցության կորպորացիայի նախագահ Ջորջ Պրեստոնը, «Նոյյան տապան» լրատվական կենտրոնի տնօրեն Տիգրան Հարությունյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դասախոս Արամ Մկրտչյանը, Միդլսեքս համայնքային քոլեջի դասախոս, հրատարակիչ Բարբարա Ռիգա Մելինը եւ Ազգավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը:

Այն զեկուցումները, որոնց կարողացել ենք ներկա գտնվել, հետաքրքրական էին եւ խիստ ուսանելի, մանավանդ դրանց հետեւող քննարկումները: Ափսոս, սակայն, որ բավականաչափ ուսանողների ներկայությունը չէր ապահովված, մի բան, որ պետք է մտահոգեր կազմակերպիչներին, քանի որ մեր կարծիքով, հիմնականում ուսանողներին էր անհրաժեշտ ծանոթանալ արտահայտված մտքերին եւ քննարկումներին:

Պետք է սակայն գոհունակությամբ նշել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 2001-2002 թթ. մագիստրատուրայի ուսանողների «Հետաքննություն» հատուկ հաստվեստվության հրատարակությունը, որն իրականացվել է ԱՄՆ-ի Զարգացման գործակալության հայաստանյան մասնաճյուղի օժանդակությամբ: Բարձորակ հրատարակության մեջ տեղ են գտել Գայանե Բոստանջյանի, Հերմինե Մանուկյանի, Քրիստինե Իշիցյանի, Անուշ Սողոմոնյանի, Մերի Մարտիրոսյանի եւ Գոռ Աբրահամյանի հետաքննական հոդվածները: Առաջին է ջում երկու խոսքով ընթերցողներին են դիմել «Պրոմեդիա» կազմակերպության տնօրեն Պիտեր Այմսթաղտը եւ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Գառնիկ Անանյանը:

ՀԱՍՄԻԿ ՕՍԻԼԵՊՅԱՆ

«Արմենալը» ավելացնում է արտադրական ծավալները

Նախկին «Կանազում» շուրջ 20 մլն դոլար է ներդրվել

Երկու տարի առաջ Քանաքեռի ալյումինի գործարանի հիմքի վրա ստեղծվեց «Արմենալ» հայ-ռուսական համատեղ ձեռնարկությունը: Այս ընթացքում ռազմավարական նշանակություն հանդիսացող ռուսական «Ռուսալ» ընկերությունը հիմնական եւ շրջանառու միջոցների տեսքով շուրջ 20 մլն դոլարի ներդրումներ է կատարել, ինչի շնորհիվ թիթեղագլանման արտադրությունն այժմ ամբողջովին մեքենայացված եւ կոմպյուտերացված է: Այս մասին երեկ հայտնեց ձեռնարկության տնօրեն Մովսես Չավարյանը: Նրա երկար եւ հաճախ ավելորդ մանրամասներով ելույթից տեղեկացանք նաեւ, որ «Արմենալի» արտադրական ծավալներն անընդհատ ավելանում են. մայիսին՝ ապրիլի համեմատ, մոտ 2 անգամ, իսկ հունիսին՝ մայիսի համեմատ, նախատեսվում է 3-4 անգամ: Իսկ այս տարվա հունվար-փետրվարին արտադրանքի ծավալները կրկնակի ավելի են երկու տարի առաջվա նույն ժամանակահատվածի ծավալներից: Ըստ տնօրենի, ծրագրվում է մինչեւ տարեվերջ դրանք հասցնել ամսական 1000 տոննայի: Էապես փոփոխվել է նաեւ արտադրող թիթեղի (ֆոլգա) որակը: Հայ մասնագետների մասնակցությամբ մշակվել եւ գործում է սեփական թափոնից նոր արտադրանք ստանալու տեխնոլոգիան:

Առանձին անդրադարձ եղավ կադրերի պատրաստման եւ վերապատրաստման հարցին: Դա կատարվում է ինչպես տեղում, այնպես էլ Ռուսաստանում, արեւմուտքի երկրներում: Որոշակի փորձաշրջանից հետո նոր աշխատակիցներն ընդունվում են որպես հաստիքային աշխատող: Այս տարվա մայիս-հունիսին մոտ 100 նոր աշխատակիցներ են ընդունվել աշխատանքի: «Արմենալը» կադրերի պատրաստման վերաբերյալ պայմանագիր է կնքել Երեւանի պոլիտեխնիկական համալսարանի հետ: Մովսես Չավարյանն ընդգծեց, որ գիտական մտքի ներդրումը ձեռնարկությունում խիստ կարեւորվում է՝ եւ ուկայում մրցունակ մնալու գլխավոր պայմաններից մեկն է: Նա անդրադարձավ նաեւ բնապահպանական խնդիրներին, ասելով, որ, ի տարբերություն այլ մետալուրգիական ձեռնարկությունների, «Արմենալն» այստեղ մեծ խնդիրներ չունի: Չնայած դրան, այս ոլորտը եւս կարեւորվում է «Ռուսալի» կողմից, որը պատրաստվում է այդ նպատակով ներդնել շուրջ 2 մլն դոլար:

Մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողները տեղեկացան, որ «Արմենալի» արտահանման ուկան հիմնականում Եվրոպան է: Աշխատանքի է տարվում Մերձավոր Արեւելքի երկրներ, Իրան արտահանելու համար: Ճիշտ է, արտահանման ընդհանուր քաղաքականությունը որոշում է «Ռուսալը», բայց «Արմենալը» նույնպես ունի արտահանման բաժին: Ձեռնարկության տնօրենի հավաստմամբ, որակի միջազգային սերտիֆիկատ ISO 9001: 2000 ստանալուց հետո հնարավորություն է առաջանում ԱՄՆ ուկա մտնելու համար:

«Արմենալի» գործունեության մյուս ուղղությունը ներքին կոոպերացիային նպաստելն է: Բազմաթիվ անհրաժեշտ սարքավորումներ եւ նյութեր, որոնք ներմուծվում էին, աստիճանաբար փոխարինվում են տեղում արտադրվողներով: Այս առումով «Արմենալը» համագործակցում է «Նաիրիտի», «Քար եւ սիլիկատներ» ԳՀԻ-ի, «Պլաստպոլիմերի», «Գրանդ սանի» եւ ուրիշ ձեռնարկությունների հետ:

Որքա՞ն մարդ է աշխատում «Արմենալում» հարցին Մովսես Չավարյանը պատասխանեց, որ աշխատակիցների ցանկը տարբերակված է ձեռնարկության հիմնական աշխատողներ, պայմանագրային աշխատողներ, գործնական պարապմունքներ անցկացնող բուհի շրջանավարտներ, փորձաշրջան անցնողներ: Նշվեց, որ առանց վերջին երկու խմբի աշխատակիցների թիվը 850 է: Այդ թիվը 1000-ից կանցնի: «Ընկերությունը կարո՞ղ է իր ստանձնած պարտավորություններն աշխատավարձի չափի մասին» մեր հարցին տնօրենը դրական պատասխանեց, ավելացնելով, որ մշակվող նոր բիզնես-ծրագրում նախատեսվում է վարձատրության էլ ավելի բարձրացում: Իսկ այժմ միջին աշխատավարձը 120 դոլար է, սակայն կան ինչպես 60 դոլար, այնպես էլ մինչեւ 400 դոլար ստացողներ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԵՑՍԱԾԱԿԱՐԴԱԿ

Ծրագիրն ապացուցեց իր սնանկությունը

Դրա գործունեության 1 տարվա ընթացքում աղքատության պատկերը գրեթե նույնն է

Կառավարությունը վերջին ամիսներին անընդհատ հիշեցնում է աղքատության դեմ պայքարի նոր ամփոփ ծրագրի մշակումը: Աղքատության նվազեցման ռազմավարական ամփոփ ծրագիրը, ըստ գովերգողների, պետք է դառնա ուղենիշ սոցիալական այդ ահագնացող չարիքը հաղթահարելու համար: Արդեն ստացվել է համապատասխան դրամաշնորհը (շուրջ 300 հազար դոլար), Նիդեռլանդներից, սկսվել են փաստաթղթի մշակման աշխատանքները: Ինչպիսի՞ն կլինի այն, իսկապե՞ս կստեղծվեն աղքատության նվազեցման, սոցիալական բեւեռացման մեղմացման, սպեցիֆիկ տնտեսության էական նվազեցման, տնտեսական աճի եւ նոր աշխատատեղերի ստեղծման, եկամուտների արդարացի վերաբաշխման գործուն մեխանիզմներ: Սակայն հարցեր են, որոնց պատասխանները հնարավոր կլինի ստանալ միայն ծրագիրը կենսագործելուց հետո: Ուստի չենք ցանկանում առանց լուրջ հիմնավորումների ի սկզբանե դատապարտված համարել այս ծրագիրը: Սակայն կցանկանայինք նշել, որ եթե սկզբունքորեն նման լինի ներկայումս կառավարության որդեգրած Աղքատության նվազեցման միջանկյալ ռազմավարական ծրագիրն (այսուհետեւ՝ միջանկյալ ծրագիր), արդա այժմ արդեն կարելի է կանխատեսել դրա սնանկությունը:

Առիթն ունեցել ենք անդրադառնալու միջանկյալ ծրագրին, նշելով, որ դա, ըստ էության, անիմաստ փաստաթուղթ է եւ իր առջեւ ինչպես բազային, այնպես էլ լավատեսական սցենարներում դրել է կոմպեսիկ փոփոխություններ կատարելու նպատակ: Դա արտացոլված է առաջիկա երեք տարիներին (2001-2003 թթ.) մի շարք ցուցանիշների աղքատության կրճատման, եկամուտների անհավասարության, համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ հարկային մուտքերի եւ այլ տվյալների համար արված կանխատեսումներում: Սակայն պարզվում է, որ դա ամբողջ դժբախտությունը չէ: Գոնե 2001 թ. համար արված անգամ ամենահամեստ կանխատեսումները վերոնշյալ հիմնական ցուցանիշների գծով, փաստորեն, չեն-կատարվել: Այսինքն կառավարության՝ փչած փուչիկը միջանկյալ ծրագրի անհրաժեշտության եւ կարեւորության՝ մասին, պայթեց: Դառնանք փաստերին:



Աղքատության կրճատո՞ւմ

Համաձայն 1998-99 թթ. վիճակագրության, պետական ռեգիստրի եւ վերլուծության նախարարության եւ Համաշխարհային բանկի օժանդակությամբ կատարված կենսամակարդակի ամբողջական ուսումնասիրության, աղքատ բնակչությունը կազմել է 55 տոկոս: ՄԱԿ-ի կողմից ընդունված է աղքատության հետեւյալ չափանիշը: 1 անձի օրական եկամուտը չի գերազանցում 1 դոլարը: Հայաստանի վիճակագրական ծառայության չափանիշներն աղքատության վերաբերյալ այսպիսին են՝ ամսական եկամուտների 15 հազար դրամի (օրական 1 դոլարից էլ պակաս) դեպքում՝ անձը համարվում է աղքատ: 15 հազար դրամը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքն է: Միջանկյալ ծրագրի կանխատեսմամբ, 2001 թ., ըստ բազային սցենարի, աղքատների տեսակարար կշիռը պետք է իջնի մինչեւ 53 տոկոս, ըստ լավատեսականի՝ մինչեւ 51 տոկոս: Նկատի ունենալով, որ կառավարության կողմից այս ծրագրի ընդունումից (2001 թ. մարտ) անցել է ավելի քան մեկ տարի եւ 2001 թ.-ն էլ ավարտվել է, փորձեցինք տեղեկանալ, թե ի՞նչ արդյունք ունենք հիմա: Վիճակագրության ծառայության խորհրդի անդամ Հրայր Պետրոսյանը մեզ հայտնեց, որ դեռեւս նոր ամբողջական ուսումնասիրություն չի կատարվել: Սակայն նա մեզ տրամադրեց վիճակագրության եւ Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրի կողմից անցյալ տարվա նոյեմբերին Երեւանում, Շիրակի, Լոռու, Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզերում անցկացված հարցման արդյունքները: Հարցման նպատակն էր արձանագրել առկա փոփոխությունները: Դժբախտաբար, հարցումից պարզվել է, որ բնակչության 54 տոկոսն ունի ամսական 15 հազար դրամից փոքր եկամուտ: Փաստորեն, աղքատությունը նվազել է ընդամենը 1 տոկոսով: Դա չի կարելի առաջընթաց համարել, եթե նկատի ունենանք միջանկյալ ծրագրի առջեւ դրված խիստ համեստ նպատակները: Բնականաբար, անիմաստ է խոսել լավատեսական սցենարով սպասվող ցուցանիշների մասին: Այսինքն կարող ենք արձանագրել, որ Աղքատության նվազեցման միջանկյալ ռազմավարական ծրագիրը 2001 թ. արդյունքներով չի կատարել իր հիմնական խնդիրը՝ աղքատության կրճատումն անգամ իր իսկ կանխատեսած նվազագույն չափով: Իսկ ինչպե՞ս է ստացվել, որ տարեկան արդյունքներով 9,6 տոկոս տնտեսական աճ արձանագրած երկրում բնակչության աղքատությունը գրեթե չի նվազել:

Տնտեսական աճ՝ առանց սվերայնության նվազեցման

2001 թ. երկրի համախառն ներքին արդյունքը կազմել է 1 տրիլիոն 177 մլրդ դրամ, ավելի, քան միջանկյալ ծրագրի բազային սցենարով նախատեսված 1 տրիլիոն 149 մլրդ դրամը: Սակայն ՀՆԱ-ի մեջ հարկերը կազմել են 168 մլրդ դրամ, այսինքն՝ 14,3 տոկոս: Մինչդեռ նույն բազային սցենարով այդ թիվը պետք է կազմեր 17,2 տոկոս: Ի՞նչն է պատճառը, որ նախատեսված հարկային մուտքերը չեն ապահովվել, եւ կառավարությունը, գործունեության հիմք ընդունելով այս ծրագիրը, այս դեպքում եւս չի հասել դրանից ակնկալվող արդյունքին: Մեկնաբանություններ ստանալու համար դիմեցինք Ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Տիգրան Խաչատրյանին, որը պատրաստակամությամբ համաձայնեց զրուցել մեզ հետ: Նա ՀՆԱ-ի նկատմամբ հարկերի նման ցածր ցուցանիշի օբյեկտիվ պատճառներից մեկը համարեց այն փաստը, որ տնտեսության մեծ աճ ապահոված ճյուղերից մեկը գյուղատնտեսությունն է, որն ազատված է հարկերից: Մեկ այլ ոլորտ է ենթակառուցվածքների ստեղծման բնագավառը, որտեղ խոշոր ներդրումներ են կատարվել դրսից: Իսկ այդ ծրագրերը նույնպես չեն հարկվում: Մնում է առեւտուրը, որտեղ, փոխնախարարի խոսքով, մրցակցությամբ, հարկման արդյունավետությունը բարձրացնելու մեծ հնարավորություններ կան: Նա, որպես օրինակ, նշեց տոնավաճառները, որտեղ հազարավոր սուբյեկտներ առեւտուր են անում, եւ շնորհիվ առեւտրի կազմակերպման այս ձեւի, անգամ ցանկության դեպքում չեն կարող հարկեր վճարել: Այսինքն նրանք հարկային մարմիններում հաշվառված չեն:

Մեր կողմից նշեցինք, որ տնավաճառը միակ արտոնյալ ոլորտը չէ: Դրան հարկ է ավելացնել առավել շահութաբեր ապրանքների ներմուծմամբ, երթուղային գծերի սնօրինմամբ զբաղվողներին, որոնք հարկային պարտավորությունները եթե երբեմն կատարում են էլ, ապա ըստ սեփական հմահաճույքի, ոչ թե օրենքի պարտադրմամբ: Հենց այստեղ պետք է փնտրել սվերային տնտեսության ահռելի ծավալների պատճառները: Հենց՝ այս անձանց եւ կազմակերպություններին հարկման դաշտ պետք է բերել՝ դրանով իսկ ապահովելով եկամուտների արդարացի վերաբաշխումը եւ լուրջ քայլ կատարելով աղքատության հաղթահարման համար: Մինչդեռ միջանկյալ ծրագիրը գրեթե ոչինչ չի նախատեսում այս ուղղությամբ: Արդյունքում, ինչպես տեսնում ենք, տեղի է ունենում այն, ինչ պետք է տեղի ունենար: Արձանագրում ենք տնտեսական լուրջ աճ, որը չի բերում սոցիալական բեւեռացման մեղմացման եւ աղքատության կրճատման: Դրա վառ ապացույցն է նաեւ եկամուտների անհավասարության չափորոշիչ համարվող Ջինի գործակիցը:

Եկամուտների անհավասարությունը հսկայական է

Ջինի գործակիցը տատանվում է 0-ից (եկամուտների լրիվ հավասարություն) մինչեւ 1-ը (եկամուտների լրիվ անհավասարություն) ընկած միջակայքում: Հայաստանի համար այն, 1999 թ., համաձայն EBRD Transition Report 2000-ի, 0,59 է: Դա ամենաբարձրն է անցումային տնտեսություն ունեցող ԱՊՀ եւ Արեւելյան Եվրոպայի երկրների մեջ: Երբ ֆինանսների եւ էկոնոմիկայի փոխնախարար Տիգրան Խաչատրյանից փորձեցինք տեղեկանալ սրա պատճառները, նա, ընդգծելով, որ իր անձնական կարծիքն է հայտնում, նշեց, որ Հայաստանում շատերը չեն ցանկանում ասել իրենց իրական եկամուտները: Դրա պատճառով էլ ստանում ենք Ջինի նման գործակից: Ըստ Տիգրան Խաչատրյանի, այն օտարերկրացիները, ովքեր լինում են Հայաստանում եւ, օրինակ, Բրազիլիայում, որն ունի նույն Ջինի գործակիցը, չեն հավատում, որ աղքատության նույն պատկերն է: Նրանք նշում են, որ աղքատը Բրազիլիայում շատ ավելի վատ պայմաններում է, քան աղքատը Հայաստանում, իսկ հարուստն այնտեղ շատ ավելի հարուստ է, քան հարուստն այստեղ: Հետեւաբար, Տիգրան Խաչատրյանի կարծիքով, մեզ մոտ անցկացրած հետազոտության որակը բարձր չի եղել: Իսկ թե հիմա, այդ հետազոտությունից 2 տարի անց եւ միջանկյալ ծրագրի կառավարության ընդունումից 1 տարի անց «ինչպիսի՞ն է Ջինի գործակիցը» հարցին փոխնախարարը պատասխանեց, որ նոր հետազոտություն չի անցկացվել, եւ ներկա պատկերը հայտնի չէ: Սակայն վստահաբար կարող ենք ասել, որ էապես փոխված չի լինի: Աղքատության կրճատման, համախառն ներքին արդյունքից հարկերի հավաքման, սվերային տնտեսության վիճակի վերաբերյալ վերեւում նշված ցուցանիշները կարող են նման եզրակացության համար հիմք հանդիսանալ: Գուցե նաեւ այս հանգամանքներից ելնելով էլ կառավարությունը նոր հետազոտություն չի անցկացնում: Ի դեպ, միջանկյալ ծրագիրը 2001 թ. համար Ջինի գործակցի էական նվազում չի նախատեսում: Պետք է լիներ 0,56:

Պե՞տք էր արդյոք ծրագիրը

Կարծում ենք, որ պատասխանը երկմտելու տեղիք չի տալիս: Երբ ծրագիրը մշակվում էր, ինքնին տարօրինակ էր հնչում «միջանկյալ ռազմավարական» բառակապակցությունը, որովհետեւ միջանկյալն ու ռազմավարականը եթե ոչ հակադիր, ապա գոնե չհամադրվող հասկացություններ են: Այնուհետեւ, փաստաթղթում ի սկզբանե լուծված չէր տնտեսական աճին եւ աշխատատեղերի ստեղծմանը հաջորդող ամենակարեւոր խնդիրը՝ օրենքի առաջ բոլորի հավասարությունը մասնավորապես հարկային պարտավորությունների կատարման առումով: Եվ եթե անկեղծ լինենք, որեւէ ծրագիր կամ այլ փաստաթուղթ այդ խնդիրը չի էլ լուծի: Դրա համար անհրաժեշտ է երկրի բարձրագույն իշխանության քաղաքական կամքը: Սակայն առայժմ դա տեսանելի չէ:

Վերադառնալով աղքատության կրճատման միջանկյալ ծրագրին, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել եւս մեկ հարցի վրա: Ծրագիրն, ինչպես արդեն նշվեց, պետք է գործի 2001-2003 թթ.: Մինչդեռ այդ ընթացքում, մինչեւ այս տարվա օգոստոս ամիսը, պետք է պատրաստ լինի աղքատության կրճատման ամփոփ ծրագիրը, որից հետո կներկայացվի կառավարության հաստատմանը: Հետաքրքրական է՝ ո՞ր ծրագրով է առաջնորդվելու կառավարությունը մինչեւ 2003 թ. ավարտը: Եթե միջանկյալով, ապա դա նշանակում է, որ եւս 1,5-2 տարի շարունակելու է ոչինչ չանել: Եթե ամփոփ ծրագրով, ապա դա էլ լրացուցիչ անգամ վկայում է միջանկյալ ծրագրի անիմաստությունը եւ սնանկությունը:

ԱՐԱ ՊԱՊՏԻՍՈՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Հիմնականում՝ աճող թվեր

ԼՂՀ վիճակագրական պետվարչությունը հրապարակել է հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության եւ շինարարության ցուցանիշները 2002 թ. հունվար-ապրիլի կտրվածքով:

Համաձայն այդ պաշտոնական տեղեկագրության, արդյունաբերության գծով առաջին չորս ամսում թողարկվել է 1904,6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 106,2 տոկոս: Ընդ որում, միայն ապրիլին արտադրանքի թողարկման աճը կազմել է 26,1 տոկոս: Իսկ ընդհանուր առմամբ արդյունաբերական արտադրանքի արտադրության աճն ապահովվել է «Վերամշակող արդյունաբերության» եւ «Էլեկտրաէներգիայի, գազի ու ջրամատակարարման» հաշվին:

Պատրաստի արտադրանքի իրացումը կազմել է 1911,0 մլն դրամ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 113,1 տոկոսը), որից ԱՊՀ երկրներում՝ 26,1 մլն դրամ, այլ երկրներում՝ 176,1 մլն դրամ:

Արդյունաբերատարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը կազմել է 2607 մարդ՝ 115 մարդով ավելի համեմատական ժամանակաշրջանից:

Գյուղատնտեսության բնագավառում արձանագրվել է արտադրական թված ոչ բոլոր ցուցանիշներով: Այսպես, եթե չորս ամսվա տվյալներով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել է 0,8 տոկոսով, իսկ թռչուններինը՝ 62,2 տոկոսով, ապա մանր եղջերավոր անասունների ու խոզերի գլխաքանակը նվազել է համապատասխանաբար 1,7 եւ 9,8 տոկոսով: Կաթի եւ ձվի արտադրությունը համեմատաբար աճել է, փոխարենը նվազել է մսի ու թռչնամսի իրացման ցուցանիշը (82,7 տոկոս):

Շինարարության գծով 2002 թ. հունվար-ապրիլ ամիսներին ԼՂՀ-ում իրականացվել է 1318,1 մլն դրամի կապիտալ շինարարություն, որը կազմել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 123,2 տոկոսը:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների, իրականացված կապիտալ շինարարությունում համեմատական աճ է գրանցվել՝ բնակչության՝ 4,3 անգամ, օտարերկրյա ներդրումների՝ 3,9 անգամ, կազմակերպությունների՝ 3,3 անգամ, միջոցների հաշվին:

Գ. Գ.

Ստեփանակերտ

Շնորհակալություն

Ուրշ վիրահատության պատրաստվող հիվանդի ադրումների մասին միայն կարող է պատմել նա, ով անցել է այդ ճանապարհը: Այս տարվա փետրվարին ուրշ վիրահատության ենթարկվեցի «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնում: Կյանքի եւ մահվան այդ գոյապայքարի ողջ ընթացքում ծանր, մղձավանջային ադրումների մեջ հույսն ու հավատն ինձ չլքեցին երբեք, եւ սա հիվանդանոցի ամբողջ բուժանձնակազմի զարմանալի հոգատար վերաբերմունքի շնորհիվ: Կյանքը վերստին ադրողի երախտիքի խոսքերս եմ հայտնում կենտրոնի ուրշ վիրաբույժներ Հրայր Հովակիմյանին եւ Վիլեմ Մանուկյանին, հետվիրաբուժական վերականգնողական ուրսաբան բժիշկ Արամ Նազարյանին:

Եվ լավ կլիներ, որ մեր հիվանդանոցները կարողանային գոնե կիսով չափ աշխատել այն սկզբունքներով, որոնք գործում են «Նորք-Մարաշ» կենտրոնում:

Խորին շնորհակալությամբ

ՏԵՆԵԲԻԿ ՏԱԲՈՒՆՅԱՆ

Թուրքիայի նախագահ Սեզերը խորհրդակցություն է հրավիրում

Օրակարգում վարչապետ Էջեւիթի պաշտոնավարությունը շարունակելու հարցն է

«Նոյյան տաղան» գործակալությունը հունիսի 4-ի հաղորդագրությամբ անդրադարձել էր ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Ֆիլ Ռիկերի հայտարարությանը, ըստ որի Բուշի անձնակազմը կարծիք է հայտնել, թե Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էջեւիթի հիվանդության պատճառով երկրում անկայունություն եւ ճգնաժամ չի առաջանա: Չնայած հայտարարության ոճին, դա Էջեւիթի կառավարության ճակատագրի նկատմամբ պաշտոնական Վաշինգտոնի մտահոգության արտահայտությունն էր:

Վաշինգտոնի պարագայում այս մտահոգությունը միանգամայն տրամաբանական է, իսկ դրա համար առկա են լուրջ պատճառներ: Դրանցից կարելի է առանձնացնել թուրքական կոալիցիոն կառավարության մաս կազմող կուսակցությունների միջեւ հակասությունների սրումը, սրման Էջեւիթի հիվանդությամբ պայմանավորումն ու հիվանդության անխնա շահարկումը Թուրքիայի քաղաքական շրջանակներում:

Մայիսի 31-ի համարում «Ազգը» «Թուրքիան ներքաղաքական ցնցումների շեմին» հոդվածով փորձել էր վերլուծել երկրում ստեղծված իրավիճակը՝ տեղեկացնելով, որ հունիսի 7-ին նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը պատրաստվում է խորհրդակցություն հրավիրել՝ մասնակցությամբ Մեջլիսում ներկայացված բոլոր կուսակցությունների ղեկավարների քննարկելու այն հարցերը, որոնք առնչվում են Եվրամիության պահանջներին:

Խորհրդակցություն հրավիրելու Սեզերի որոշումը մնում է ուժի մեջ: Դրան կառավարող կուսակցությունների կողմից հավանություն են տվել ընդդիմադիր իսլամամետ «Երջանկություն» կուսակցության նախագահ Ռեջայի Քութանն ու «Արդարության եւ բարգավաճման» կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Հարցը, սակայն, վերոհիշյալ կուսակցությունների ղեկավարները չեն, այլ վարչապետ Էջեւիթը: Թեեւ նա խորհրդակցությանը մասնակցելու պատրաստակամություն է հայտնել, հիվանդության պատճառով բաց էր թողել Ազգային անվտանգության խորհրդի մայիսի 30-ի նիստը:

Չի բացառվում, որ նա բաց թողնի նաեւ Սեզերի հրավիրած խորհրդակցությունը: Այլապես Սեզերն Էջեւիթին Չախ ժողովրդավարական կուսակցության ղեկավար կազմի այլ անդամով փոխարինելու հարց չէր բարձրացնի: Այլ կերպ՝ հավանական է, որ խորհրդակցությունը գումարվելու է Էջեւիթի բացակայությամբ: Սա մասնակցությունից հրաժարվելու հիմք է տվել «Ճշմարիտ ուղի» կուսակցության նախագահ Թանսու Չիլլերին, եւ նա հայտարարել է. «Առանց վարչապետի ներկայության խորհրդակցության մասնակցելը նշանակում է հաստատվել մեծարգո Էջեւիթի անգործունակության փաստի հետ, ինչը միջազգային ասպարեզում թուլացնում է Թուրքիայի դիրքերը: Մենք չենք կարող սանձնել դրա պատասխանատվությունը»:



Բյուլենթ Էջեւիթը. հիարկե, ոչ հիվանդ վիճակում:

Չիլլերի պարագայում խնդիրը, ինչ խոսք, Թուրքիայի դիրքերը չեն, այլ իր գլխավորությամբ անցումային կառավարության կազմավորումը եւ երկրում Մեջլիսի վաղաժամկետ ընտրությունների անցկացումը: Դրանք կնշանակվե՞ն, դժվար է ասել: Բայց որ վերոհիշյալ խորհրդակցությունը, որպես առաջնահերթ խնդիր, ԵՄ-Թուրքիա հարաբերությունների փոխարեն քննարկելու է Էջեւիթի հիվանդության եւ նրա կառավարության հետագա ճակատագրի հարցը, ակնհայտ է:

Ահա թե ինչու Թուրքիայի քաղաքական շրջանակներում հաճախակի է դառնում Չախ ժողովրդավարական կուսակցության արտահերթ համագումարի, երկրում վաղաժամկետ ընտրությունների եւ վարչապետի պաշտոնում Էջեւիթին փոխարինելու հարցերի արծարծումը: Այս ամենի առումով պատահական չէր ԱՄՆ ռազմավարական եւ միջազգային ուսումնասիրությունների ինստիտուտի մասնաճյուղը, որ պաշտոնական Վաշինգտոնը դեմ է Թուրքիայում վաղաժամկետ ընտրությունների անցկացմանը:

Ավելին այդ ինստիտուտը, «Նոյյան տաղանի» վկայությամբ, նույնիսկ նշում է Էջեւիթին վարչապետի պաշտոնում փոխարինելու հավակնորդներին: Սա ոչ այլ ինչ է, քան զբաղեցրած պաշտոնից Էջեւիթի մոտալուտ հեռացման կանխատեսում, ինչը կարելի է ճիշտ համարել: Սակայն երբ ամերիկյան ինստիտուտը Չախ ժողովրդավարական կուսակցության փոխնախագահ ու փոխվարչապետ Հյուսամեթդին Օզքանին համարում է Էջեւիթի դաշնակից եւ կարծիք է հայտնում, որ նա վերջինի փոխարեն կստանձնի «Մայր հայրենիք» կուսակցության ղեկավարումը, միանգամայն սխալվում է, որովհետեւ այդ կուսակցության ղեկավարը Մեսութ Յըլմազն է:

Ինչ վերաբերում է տնտեսության գծով պետնախարար Քեմալ Դերվիշին, որի մասին տեղեկացնում է ինստիտուտը, կարելի է նրան վարչապետի պաշտոնում Օզքանի մրցակիցը համարել: Բայց նա կուսակցական չէ: Այս հանգամանքը նրան զրկում է Էջեւիթի Չախ ժողովրդավարական կուսակցության նախագահի պաշտոնին հավակնելու հնարավորությունից: Քանի որ Թուրքիայում վարչապետի պաշտոնն սանձնում է ընտրություններում մյուսների նկատմամբ հաղթանակի հասած կուսակցության ղեկավարը, ուրեմն վարչապետ դառնալու Դերվիշի հնարավորությունները խիստ սահմանափակ են: Հետեւաբար ամերիկյան ինստիտուտի պնդումը, թե Դերվիշը կուսակցության շարքերում հակառակորդներ ունի՝ միանգամայն ավելորդ է:

Համենայն դեպս, անկախ Էջեւիթի հիվանդությունից կամ Չիլլերի բացասական դիրքորոշումից, հունիսի 7-ի խորհրդակցությունը Սեզերի գլխավորությամբ կկայանա: Կասկածից վեր է, որ Էջեւիթի բացակայության դեպքում խորհրդակցությանը նրան կփոխարինի փոխվարչապետ Օզքանը: Ուրեմն, ինչպես վերոհիշյալ կուսակցության նախագահի, այնպես էլ վարչապետի պաշտոնները զբաղեցնելու Օզքանի հնարավորություններն անհամեմատ նախընտրելի են:

Հարկ է, սակայն, նշել, որ խորհրդակցությունը որքան էլ քննարկի Էջեւիթի կառավարության հետագա ճակատագրի, ինչպես նաեւ վարչապետի պաշտոնում նրան Օզքանով փոխարինելու հարցը, վճռական խոսքը Թուրքիայում զինվորական իշխանություններին է պատկանում: Իսկ վերջիններիս ներկայացուցիչներն Ազգային անվտանգության խորհրդում գերակայում են քաղաքացիական իշխանությունների ներկայացուցիչներին: Ուրեմն, Էջեւիթի կառավարության հետագա ճակատագրի մասին որեւէ պատկերացում կազմելու համար մնում է սպասել վերոհիշյալ խորհրդի առաջիկա նիստին:

ՀԱՅՈՒ ՉԱՔԲԱՆ

2001 թ. ստրկական վիճակում է եղել շուրջ 4 մլն մարդ

Հայաստանը «սեւ ցուցակում»

ԱՄՆ պետդեպարտամենտի հրապարակած զեկուցագրի տվյալներով, անցյալ տարի ստրկական զանազան հարկադիր աշխատանքներ կատարած անձանց թիվը տատանվել է 700 հազարից 4 միլիոնի սահմաններում: Ասիայի, Մերձավոր Արեւելքի եւ Արեւելյան Եվրոպայի 19 երկրներ ջանքեր չեն գործադրում այդ երեւույթին վերջ դնելու համար, նշվում է ԱՄՆ վարչակազմի երկրորդ ամենամյա զեկուցագրում: Ըստ փաստաթղթի, անցյալ տարի մինչեւ 4 մլն չափահասներ եւ երեխաներ «իրենց կամքին հակառակ գնվել, տեղափոխվել եւ պահվել են ստրկական պայմաններում»: Խոսքը մասնավորապես պոռնկության, ընդհատակյա արհեստանոցներում եւ գյուղական տնտեսություններում հարկադիր աշխատանքի, բռնի զինծառայության, սպասավորության, մուրացկանության մասին է:

Զեկուցագիրը ներկայացնելով՝ ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը հայտարարեց, որ «զոհերի գերակշիռ մասը հարկադիր պոռնկության դատապարտված կանայք եւ երեխաներ են»: Փաուելն ընդգծեց, որ ստրկավաճառության դեմ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկող երկրները ենթակա կլինեն տարեսկզբի հանգամանքներին համապատասխան պատասխանատվության:

2-րդ խմբի մեջ մտնող 52 պետություններ բավական ջանք են գործադրում, բայց կարող են ավելին անել ստրկությունն արմատախիլ անելու համար: Այդ երկրներից են Փղոսկրյա Ափը, Չինաստանը, Հնդկաստանը, Իսրայելը, Ճապոնիան, Մարոկկոն, Նիգերիան, Պակիստանը, Սենեգալը, Թաիլանդը, Վիետնամը եւ այլն:

1-ին խմբում ընդգրկված են տվյալ առումով բարվոք վիճակում գտնվող 18 երկրներ, որոնցից են Կանադան, Բելգիան, Ֆրանսիան, Հարավային Կորեան, Շվեյցարիան: Զեկուցագրի հեղինակները հիմք են ընդունել միջազգային կազմակերպությունների եւ մարդասիրական ընկերակցությունների տվյալները եւ խոստովանում են, որ դրանք երբեմն թերի են: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, այդ երկրի վերաբերյալ նոր տվյալներ չկան փաստաթղթում: Սակայն Ֆրանսիայի բերում է 1997 թ. տվյալները, որոնց համաձայն ստրկավաճառության հետեւանքով ամեն տարի ԱՄՆ են մուտք գործում մոտ 50 հազար կանայք եւ երեխաներ, գլխավորապես մարմնավաճառության նպատակով:

Պ. Ռ.

DAILY TELEGRAPH

Հնդկաստանը հարձակվելու է Պակիստանի վրա

Ըստ անգլիական թերթի

Հնդկաստանի զինված ուժերի հեղինակավոր աղբյուրներ վկայակոչելով՝ Լոնդոնի «Դեյլի թելեգրաֆ» ազդեցիկ օրաթերթը գրում է, թե առաջիկա երկու շաբաթների ընթացքում հնդկական բանակը լայնածավալ մարտական գործողություններ է սկսելու Պակիստանի դեմ: Ըստ հիշյալ աղբյուրների, մտահղացմամբ հակապակիստանյան գործողությունը նման է լինելու ամերիկացիների հակաֆղանական ռազմարշավին: Թերթի տվյալներով, հարձակման մեջ գլխավոր դերը խաղալու են հնդկական ռազմաօդային ուժերը: Ռազմական գործողություններն սկսվելու են Քաշմիրի պակիստանյան մասի եւ բուն Պակիստանի ռմբակոծումներով: Արդա Պակիստանի որոշ շրջաններ են մտցվելու հատուկ նշանակության ջոկատներ:

Միեւնույն ժամանակ Դելիի աղբյուրները պնդում են, թե տվյալ գործողությունները ոչ մի դեպքում չեն վերածի երկու պետությունների լիածավալ պատերազմի եւ կամ միջուկային հակամարտության: Բրիտանական թերթի աղբյուրների կանխատեսումների համաձայն, ռմբակոծումներն սկսվելուց մոտավորապես մեկ շաբաթ հետո ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ ՄԱԿ-ի միջամտությամբ ռազմական գործողությունները դադարեցվելու են եւ անցկացվելու է հրադադարի նոր գիծ:

ԱՄՆ-ում մտակվել է «աղագա Իրաքի նախագիծը»

ԱՄՆ պետդեպարտամենտը մտակել է Իրաքի աղագա կառավարությանն օգնելու հայեցակարգ: Ենթադրվում է, որ այդ կառավարությունն ստեղծվելու է նախագահ Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո: Նախատեսվում է Իրաքին ֆինանսական օգնություն ցուցաբերել ենթադրյալ անցումային ժամանակաշրջանում եւ օժանդակել արաբական աշխարհի հետ Իրաքի պատերազմական հարաբերությունների վերահաստատմանը: Յու Փի Այ գործակալության տվյալներով, եկող տարի ԱՄՆ-ը 410 հազար դոլար է հատկացնելու Իրաքի աղագա վարչակազմի համար նախատեսված օրենսդրության եւ իրավական ակտերի մտակմանը:

Պետդեպարտամենտը հավանություն է տվել Իրաքի ազգային շարժման (ԻԱՇ) բյուջեին, որը կոչված է դյուրացնելու շարժման կազմերը Սիրիայում նրա շրջանային ներկայացուցչությունների հետ: Ֆինանսավորման շրջանակներում նախատեսված են հանդիպումներ Մերձավոր Արեւելքում իրաքցի փախստականների հետ, ինչպես նաեւ ԶԼՄ-ներին օգնելու ծրագիր: ԻԱՇ վաշինգտոնյան ներկայացուցիչ Թահր ալ Նաֆիբը պարզաբանում է. «Վերջին տարիներին հարեւան արաբական պետությունների կառավարությունները լավ հարաբերություններ չեն ունեցել իրաքյան ընդդիմության հետ: Մեր ծրագիրը կոչված է այդ երկրներին ցույց տալու, որ Սադդամ Հուսեյնի տապալումը կհանգեցնի տարածաշրջանի կայունությանը»:

1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ավարտից ի վեր ԱՄՆ կառավարությունը խանգարել է տապալել Սադդամ Հուսեյնի վարչակարգը: Բայց վերջերս ամերիկացի զինվորական վերլուծաբանները կասկածում են, թե հաջողության կհասնեն առանց իրաքյան ընդդիմության օգնության: ԻԱՇ խորհրդատու, Մերձավոր Արեւելքում ԿՀՎ ստորաբաժանման նախկին ղեկավար Ուիլիամ Բրանեյի խոսքերով, «պետդեպարտամենտը ճնշում է ԱՄՆ-ի հետ գործակցող ընդդիմության դերն ուժեղացնելու հնարավորությունները: Խմբերից մեկին գումար է հատկացվել իր կազմավորումը շարունակելու համար»:

Իրաքի աղագա կառավարության վերաբերյալ կարծիքների փոխանակման նպատակով ԱՄՆ-ը ծրագրում է Եվրոպայում անցկացնել մի շարք հանդիպումներ եւ «Աղագա Իրաքի նախագիծ» խորհրդաժողով, որին մասնակցելու են փորձագետներ եւ Իրաքի քաղաքացիներ: Արդեն իսկ կազմված են ԱՄՆ-ից ֆինանսավորվող 5 աշխատանքային խմբեր:

Պ. Ռ.

Մշակույթ

«Երբ ինձ հարցնում են, թե Հայաստանում որքա՞ն բարեկամ ունեմ, պատասխանում եմ՝ ամբողջ երկիրը»,- ասում է հանրաճանաչ ջութակահար «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» ի շքանշանակիր Վլադիմիր Սպիվակովը:

Հայաստան-սփյուռք երկրորդ համաժողովի շրջանակում կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Սպիվակով» հիմնադրամի կրթաշակառուների համերգը: Հայաստան-սփյուռք երկրորդ համաժողովի շրջանակում կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Սպիվակով» հիմնադրամի կրթաշակառուների համերգը:

«Իմ կյանքի պարգևներից մեկը՝ հայ ունկնդիրն է եւ հայ երեխաները»

Վլադիմիր Սպիվակովի միջազգային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը ստեղծվել է 1999 թ. հունիսին: Կազմակերպության հիմնական նպատակներն են հայտնաբերել կատարողական ասպարեզի շնորհալի պատանիներին, աջակցել նրանց կայացմանն ու կատարելագործմանը: Հիմնադրամը օժանդակում է անհրաժեշտ երաժշտական գործիքների, նոտաների ձեռքբերմանը, միջազգային մրցույթներին ու փառատոներին մասնակցությանը, բարեգործական համերգների կազմակերպմանը: Դրանցից առավել հիշարժան են Ցյուրիխում, Փարիզում, Լոնդոնում, Մոսկվայում, Կաունասում, Կոլմարում տեղի ունեցած նման միջոցառումներում հայ պատանի երաժիշտ-կատարողների մասնակցությունը: Հիմնադրամը պարբերաբար կազմակերպում է նաեւ համերգ-այցելություններ Արցախի քաղաքներ ու մարզեր: Ըստ Վլադիմիր Սպիվակովի մտահղացման, դրա ամենակարեւոր նպատակը՝ երեխաների կատարողական վարպետության կատարելագործումն է: Այդ առումով արդյունավետ էին Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ կազմակերպած վարպետության դասընթացները, որոնց մասնակցեցին ոչ միայն երեւանի պետական կոնսերվատորիայի ուսանողներն ու հիմնադրամի կրթաթոշակիրները, այլեւ Գյումրիի, Կապանի, Վանաձորի եւ Արցախի երաժշտական դպրոցի սաները: Վարպետության դասընթացների ժամանակ արտերկրի հնուս մասնագետների մասնակցության շնորհիվ ոչ միայն ի հայս եկան երաժիշտներից յուրաքանչյուրի պրոֆեսիոնալ ունակությունները ու յուրահատկությունները, այլեւ ճնարկվեցին համաշխարհային կատարողական արվեստի արդի խնդիրներից ավելի հետաքրքրականները:

Աշխարհահռչակ ջութակահար Վլադիմիր Սպիվակովի հոգեւոր ու գործնական կաղը Հայաստանի հետ սկիզբ առավ 1980-ականներին: Նա առաջիններից էր, ով բարեգործական համերգներով հանդես եկավ երկրաշարժից ավերված Լենինականում: Այդ իսկ օրերից Սպիվակովի համար բարեգործությունը դարձավ Հայաստանի հետ ստեղծագործական ու մարդկային շփումների անխակտելի մասը: Այսպես, 1999-ին Երեւանում ստեղծեց իր միջազգային հիմնադրամի մասնաճյուղը: Իսկ մեկ տարի անց կազմակերպվեց հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը: «Այն ղեկավարում է Հայաստանի առաջին տիկինը: Դա եւ՛ պատիվ է, եւ՛ պարտականություն: Ի դեմս Բելլա Քոչարյանի, երիտասարդ երաժիշտները զգում են պետական հոգածություն իրենց ապագայի հանդեպ»,- ասում է Վլադիմիր Սպիվակովի միջազգային բարեգործական հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի նախագահ Ելենա Սմբատյանը:

Անշուշտ, մեծանուն երաժշտի՝ Վլադիմիր Սպիվակովի գործունեությունը մեծ արձագանքի ու գնահատանքի է արժանանում: «Այն, ինչ անում է Սպիվակովը Հայաստանի համար, զուտ բարեգործություն չէ: Մեր հակասական ժամանակներում հասարակությունն երիտասարդությանը կրթելու ազնիվ առաքելության կարիք ունի՝ դա՝ է Սպիվակովի մեծագույն արժանիքներից մեկը», ասում է Եդվարդ Միրզոյանը: «Երբ մեծ արվեստագետը հովանավորում է երեխաներին, նա սնում է ոչ թե աշակերտների, այլ ապագա ինքնուրույն, կայացած արվեստագետների՝ այդ է անում Վլադիմիր Սպիվակովը»,- նկատում է Ժան Տեր-Մերկերյանը:

Վերոհիշյալ համերգում կամերային երաժշտության տանը ելույթ ունեցան «Սպիվակով» հիմնադրամի 15 կրթաթոշակառուներ, որոնց թվում էին Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական, Ալ. Սպենդիարյանի, Սայաթ-Նովայի անվան, ինչպես եւ վոկալ-երաժշտական դպրոցների սաները: Պատանի կատարողների ելույթը մեկ անգամ եւս հաստատեց ներկայիս հայ երիտասարդ սերնդի երաժշտական աչքի ընկնող, խոստումնալից ներուժը:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Կանաչ-կանաչ երկիր է Հայաստանը»

«Արշակ Տիգրանյան» վարժարանի սաները Երեւանում

Սփյուռք-հայրենիք կապերը կամրջելու իմաստով կարեւոր է նոր սերնդին հայրենիքին ավելի մերձեցնելը:

Լոս Անջելեսի Թեքեյան մշակութային միության «Արշակ Տիգրանյան» վարժարանի սաներն արդեն 4 տարի է Հայաստան են այցելում: Ամեն տարի երեւան գալով՝ երիտասարդներն ավելի են կապվում հայրենիքին եւ նոր լիցքեր ստացած վերադառնում: Հողակտորը, ուր պետականություն են փորձում կերտել այստեղ ապրողները, այն խարիսխն է, որ անհրաժեշտություն է, թերեւս, աշխարհի տարբեր ծագերում հայտնված հայերի համար:

«Արշակ Տիգրանյան» վարժարանի այս տարվա 16 շրջանավարտներ վերջերս Երեւանում էին: Նրանց հետ էր վարժարանի հայոց լեզվի, գրականության եւ պատմության ուսուցչուհի Լորա Գույումջյանը: Խելացի, սթափ մտածողությամբ հայուհին կյանքը նվիրած հայ դպրոցին, իր սաների մեջ աշխատում է ամեն կերպ արթուն պահել հայ ոգին: Ու բնական է, որ ամեն անգամ տագնապ է ապրում նրանց հայրենիք բերելով՝ չլինի թե հուսախաբություն ապրեն: Բայց, ինչպես մեկ անգամ արտահայտվեց երվանդ Ազատյանը, «Հայաստանը կախարդական ինչ-որ բան ունի իր մեջ: Եկողը սիրահարվում է այս հողին»:

«Հայաստան այցելելով՝ հայրենասիրությունը խոսքից ապրումի կվերածվի: Հայ մնալու համար շատ տագնապներու մեջեն կանցնիք,- ասում է Լորան: - Սոսրյա մտահոգություն է, արմատներու հետ կապը զորացնելու համար մեծ ծիգեր կգործադրենք: Կորուստները մեզի համար մեծ նշանակություն ունին, մարդիկ կան, որ ժամանակի ընթացքին կիսաշտին այդ կորուստներուն հետ եւ հոն է, որ արդեն նահանջը կսկսի: Մենք այդ նահանջին առաջը կառնենք»: «Հայ մնալը հայրենիքին մեջ եւ հայրենիքից դուրս շատ մեծ զոհողություն կպահանջի» Գարեգին Բ կաթողիկոսի խոսքերը վկայաբերելով՝ Լորան գտնում է, որ կարեւորն ազգային արժանապատվությունը պահելն է: Լոս Անջելեսի հայ համայնքն այսօր բաղկացած է Պարսկաստանից, Բեյրութից, Հայաստանից արտագաղթած հայերով եւ յուրաքանչյուր խոսվածք է առաջացել, լեզվական խառնուրդ՝ լոսանջելեսյան բարբառ: «Արշակ Տիգրանյան» վարժարանի ուսուցչուհին իրաւաբաս է եւ տարօրինակ է համարում գրական երկու լեզուների

կամ ուղղագրությունների հարցի այսչափ չարչրկումը: Տերյանն արեւելահայերեն կանցնիք, Վարուժանը՝ արեւմտահայերեն, երկուքն ալ մեր բարբառն են, մեր լեզվին հարստությունը: Սա պետք է ընդունիլ որպես իրողություն: Ուղղագրության հարց է: Բայց ուղղագրությունը մեր մեջ պետք չէ պառակտում բերե: Եթե կգիտակցինք ասիկա, ուրեմն լայնախոհ ըլլանք, հասկնանք իրար եւ ոչ թե ինքնադատենք: Մեր կյանքի իրողությունն է: Երկուքս ալ նույն Հայաստանին, նույն եկեղեցիին կպատկանինք, նույն լեզուն կխոսինք, ի՞նչ տարբերություն կստեղծեն մեր մեջ, սուր բախումներ կըլլան օտարացնելու գիտար»:

Իսկ Լորայի սաները բնավ չէին մտածում օտարանալ-օտարացվելու մասին, որքան էլ երկու ուղղագրության խնդիրը կա: Նրանք գրեթե բոլորն էլ առաջին անգամ էին Հայաստանում, հիացած էին, ոգեւորված եւ անկեղծ էին, որովհետեւ հակառակը լինելու պատճառ չունեին: Գոհար Քեշիշյան, Մարիամ Դանիելյան, Դայանա Արծրունյան, Արմեն Պողոսյան, Միսաք Թեքեյան, Էլիզ Մեշչյան: Դայանան Հայաստանն ավելի վաս էր պատկերացնում, որովհետեւ Լոս Անջելես գնացողներն այդպես էին ներկայացրել, իսկ Հայաստանը մի քանի օրում հարազատացավ, «քանի որ ամեն տեղ հայերեն կխոսին»: 5 տարի առաջ այստեղից գնացած Մարիամը լավ չի հիշում քաղաքը, բայց Երեւանի արդիական տեսքը, աշխուժությունը, սրճարաններ-դիսկոտեկները շատ է հավանել: Մինչ Երեւան գալը եղել են Փարիզում եւ «Անի» հյուրանոցն անհամեմատելի լավն է համարում Փարիզի՝ իրենց իջեւանած հյուրանոցից՝ մաքրությամբ, հարմարություններով, սպասարկմամբ:

Շատ տպավորված էին Հայաստանի բնությամբ, պատմամշակութային վայրերով: «Կգալեմ եւ կզգամ, որ Հայաստանի մեջն եմ, մշակույթը կզգամ, ժողովուրդը: Ամենը լավ է, բնությունը, մարդիկ բարի են: Միայն տխուր է, որ մուրացկանություն շատ կա, խեղճ են գյուղերը, իսկ Երեւանը շատ սիրուն է, կանաչ-կանաչ երկիր է Հայաստանը», կանաչ, խոշոր այֆերով, սեւ խոպոպներով աղջիկը զարմացած հիացմունքով էր իր տպավորությունները պատմում:

«Կհիշենք Հայաստանը եւ ամեն տարի կուգանք» ... Մինչ «Անի» հյուրանոցի սրահում դաշնամուրով կոմիտաս էր հնչում...

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՄՐՑԱՇՐՋԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄ

Ֆրանսիական շքանշան՝ Նարեկ Սարգսյանին

Հնուց ասված եւ ամեն անգամ ապացուցված խոսք է. «Տվեք ինձ ցանկացած մարդու կենսագրություն, եւ ես նրան, ցանկության դեպքում, եւ հրեշակ կներկայացնեմ, եւ սատանա»: Այսպես է բոլորիս համար: Նաեւ Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանի պարագայում:

Երբ մի քանի օր առաջ, հունիսի 3-ին, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանատանը Նարեկ Սարգսյանին հանձնվեց ֆրանսիական «Արժանիների համար» ազգային շքանշան եւ աստիճի կոչում, բազում հեռագրեր ստացավ ճարտարապետը: Դրանց թվում նաեւ այսպիսի մեկը. «Թող որ Ֆրանսիայի դեսպանի ասած ջերմ բառերը սփոփեն հայրենակիցների դառը խոսքերը»:

Այո, Երեւանի գլխավոր ճարտարապետի հասցեին նաեւ դառը խոսքեր են ասվում: Բնական է:

Իսկ ի՞նչ գործ չի արել. Գյումրու ֆրանսիական դպրոց, Երեւանի Հյուսիսային պողոտա, Երեւանում մի շարք երկրների դեսպանատների նախագծում եւ շինարարական աշխատանքների ղեկավարում: Վերջին տասնամյակում ճարտարապետի ստեղծագործական աշխատանքը համատեղել է կազմակերպչական գործունեության հետ: Իսկ այդ ոլորտն անչափ բարդ ու հակասական եզրակացությունների է հանգեցնում:

- Ես ամեն մի խոսակցության վերաբերում եմ սառնասիրտ ու փիլիսոփայորեն, ասում է Նարեկ Սարգսյանը: Հաճելի է, որ օտարներն են գնահատում քեզ, բայց ավելի հաճելի է, երբ քեզ ճիշտ են գնահատում քո հայրենակիցները, քո համաքաղաքացիները:

- Վերջին ժամանակներս երբ ուրախալի դեպք է պատահել ինձ հետ,- ասում է քաղաքի գլխավոր ճարտարապետը:- Ուրախություն ապրեցի Հյուսիսային պողոտայի բացման, իտալական փողոցի եւ դեսպանատան բացման ու ֆրանսիական այս շքանշանի ստացման օրերին:

Իսկ ինչո՞ւ Նարեկ Սարգսյանին շնորհվեց հենց այս շքանշանը:

Նարեկ Սարգսյանը 1992-93 թթ. «Ճարտարապետությունը սեյսմիկ շրջաններում» թեմայով մասնագիտական վերապատրաստման խորացված դասընթացներ է անցել Ֆրանսիայում, Մարսելի ճարտարապետական համալսարանում: Նույն տարին նա ֆրանսիացի գործընկերների հետ նախագծել եւ ապա տեղում իրականացրել է Գյումրու ֆրանսիական դպրոցի համալիրը:

1993 թ. որպես Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ճարտարապետության ֆակուլտետի նորընտիր դեկան ինստիտուտի ռեկտոր Ա. Բեգլարյանի հետ գործուն մասնակցություն է ունեցել ճարտարապետական բարձրագույն կրթության դիպլոմի վերաճանաչմանը Ֆրանսիայում: 1994 թ. ֆրանսիական կառավարությունն ընդունել է համապատասխան որոշում Երեւանի ճարտարապետական ինստիտուտի եւ ճարտարապետության ֆակուլտետի ֆրանսիական ճարտարապետական դիպլոմների համարժեքության ճանաչման մասին: Նարեկ Սարգսյանը համակարգել է ճարտարապետության եւ հաղաքաշինության բնագավառում հայ-ֆրանսիական համագործակցությունը Ֆրանսիայի հաղաքաշինության նախարարության հետ: Կազմակերպչական եւ մասնագիտական մասնակցություն է ունեցել համատեղ գիտաժողովների եւ սեմինարների անցկացմանը, Փարիզում, Լիոնում, Մարսելում եւ Երեւանում 1994-ից մինչեւ 1998 թթ. անցկացված ցուցահանդեսների կազմակերպմանը: Մասնակցել եւ նպաստել է ֆրանսիացի մասնագետների ներգրավմանը ՀՀ տարաբնակեցման գլխավոր ուղղագծի եւ ՀՀ հաղաքաշինական օրենքի մշակման աշխատանքներին:



Օժանդակել է ֆրանսահայ ճարտարապետների մասնակցությանը Հայաստանում զանազան կառույցների նախագծմանը:

Որպես դիպլոմային հանձնաժողովի անդամ՝ Նարեկ Սարգսյանը մասնակցել է Փարիզի, Մարսելի, Սենս էյենի ճարտարապետական համալսարանների դիպլոմային պաշտպանություններին:

Հայ ճարտարապետության եւ ճարտարապետական կրթության խնդիրներին նվիրված զեկույցներով հանդես է եկել Ֆրանսիայի մի շարք քաղաքներում: Ժյուրիի անդամի կարգավիճակով Ֆրանսիայում մասնակցել է մի շարք միջազգային մրցույթների:

Որպես Երեւանի գլխավոր ճարտարապետ Երեւանի գլխավոր հատակագծի մասին աշխատանքներում նա ներկայումս համագործակցում է ֆրանսիացի գործընկերների հետ, մասնակցում ֆրանսախոս քաղաքների ընկերակցության եւ հայ-ֆրանսիական մի շարք ընկերությունների աշխատանքներին:

- 1992-93 թթ. ֆրանսիացի շատ ու շատ ճարտարապետներ հյուրընկալվեցին իմ տանը,- հիշում է Նարեկ Սարգսյանը:- Մենք ոչ միայն աշխատում էինք կոնկրետ նախագծերի վրա, այլեւ հայ-ֆրանսիական բարեկամության ամրապնդման հեղինակներ դառնում: Չնայած ցուրտ ու դժվար տարիներ էին, սակայն նրանք սիրեցին պատմական հսկա մշակույթի տեր մեր ժողովրդին, մեր երկիրը:

Այսօր ոչ միայն Նարեկ Սարգսյանի անդավաճան բարեկամներ են դարձել Ֆրանսիայում մեծ հեղինակություն վայելող ճարտարապետներ եւ գիտնականներ Ժան-Մարի Բուտիկոֆերը, Սիլվի Քլավելը, Ժան Ժակ Դյուպյուին, ֆրանսահայ ճարտարապետ Ալեն Դարոնյանը եւ շատ ուրիշներ:

Սա կենսագրություն է, որն անհրաժեշտ է կարդալ:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

Կայացավ գրքի շնորհանդեսը

Քաղաքակրթական արդի փոխարկումների համատեքստում մարդու ձեւավորման ու դաստիարակման խնդիրը ձեռք է բերել առանձնահատուկ իմաստ ու նշանակություն: Ընթանում են արժեքների գլոբալացման ու լոկալացման երկու իրարամերժ գործընթացներ, որոնց էպիկենտրոնում մարդն է:

Հունիսի 5-ին Երեւանի պետական համալսարանի Վարդգես եւ Ռիթա Պալյանների անվան գիտաժողովների դահլիճում տեղի ունեցավ «Աշխարհայացքայինը ժամանակակից հայ կրթամշակութային համակարգում» ժողովածուի շնորհանդեսը, որի նախաձեռնողն էր փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Շահբազյանը: Ժողովածուն կազմվել է կրթամշակութային քաղաքականության հիմնահարցին նվիրված 2001 թ. հանրապետական գիտաժողովի նյութերի հիման վրա: Այն կոչված է պետական այրերի, կրթամշակութային գործիչների եւ լայն հասարակության ուշադրությունը սեւեռելու հանրապետությունում աշխարհայացքային-մեթոդաբանական դաստիարակության ճգնաժամային վիճակի վրա եւ ուղիներ փնտրել՝ այդ հույժ կարեւոր խնդիրը համահունչ դարձնելու ժամանակակից գիտության եւ ազգային-սոցիալական ու մշակութային զարգացումներին:

ՏԱԹԵՎԻԿ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Մարզական

«Ա» խումբ

Սենեգալն «ամուր ընկույզ» է

Դանիա-Սենեգալ՝ 1-1 (1-0)

1-0՝ Դալ Թոմասոն (16՝ 11 մ), Սալիֆ Դիաո (52):

Հանդիպումը սպասվում էր մեծ հետաքրքրությամբ: Հաղթանակի դեմքում դանիացիներն աշխարհի առաջնության մասնակիցներից առաջինը 1/8 եզրափակիչի ուղեգիր կնվաճեին: Սենեգալցիները, որոնք մեկնարկում հաղթել էին չեմպիոնին, պետք է ձգտեին առաջացնել, որ ֆրանսիացիների հետ խաղում հաջողությունը պատահականություն չէր: Առաջին իսկ րոպեներից խաղադաշտում ուժային կոշտ պայքար ծավալվեց: 16-րդ րոպեին Դալ Թոմասոնին վայր գցելու համար նշանակվեց 11 մ հարված, եւ տուժողն ինքն էլ իրացրեց: Բաց թողած գոլից հետո սենեգալցիները տիրեցին նախաձեռնությանը եւ մի քանի վտանգավոր պահեր ստեղծեցին մրցակցի դարպասին: Գոլ խփելու լավ հնարավորությունները չօգտագործեցին Ֆադիգան եւ Դիոմը: Բայց սենեգալցիների ջանքերն ի վերջո պսակվեցին հաջողությամբ: 52-րդ րոպեին Ֆադիգան ճշգրիտ փոխանցումով հարվածի դուրս բերեց Դիաոյին, որն էլ վերականգնեց հավասարակշռությունը: Բաց թողած գոլը կարծես ընկճեց դանիացիներին, իսկ ահա սենեգալցիները, ոգեւորված հաջողությունից, նոր գրոհներ ձեռնարկեցին: 56-րդ րոպեին դանիացիների դարպասապահը որսաց Դիոմի հեռահար հարվածը, այնուհետեւ հաջող խաղաց Ֆադիգայի հետ մենամարտում: Խաղի վերջին 30 րոպեներին դանիացիները միայն մեկ անգամ սպառնացին մրցակցի դարպասին, սակայն հարվածը դիպուկ չստացվեց: Չնայած վերջին 10 րոպեները սենեգալցիներն անցկացրին տասը հոգով (դաշտից հեռացվեց Դիաոն), սակայն դա չազդեց մրցակցության ելքի վրա: Սենեգալցիներն առաջնության 2-րդ հանդիպումն էլ վստահ անցկացրին եւ հավակնում են 1/8 եզրափակիչի ուղեգրին:

Չեմպիոնի վիճակն օրհասական է

Ֆրանսիա-Ուրուգվայ՝ 0-0

Մեկնարկային տուրում անհաջողության մատնված հավականների մրցավեճում պարտությունը մրցակիցներից յուրաքանչյուրի համար կարող էր ճակատագրական լինել: Ուստի երկու թիմերն էլ գործում էին չափազանց զգույշ՝ մեծ ուշադրություն դարձնելով սեփական դարպասի պաշտպանությանը: Ֆրանսիացիների կազմում կրկին բացակայում էր Զիդանը, որին ավելացել էր նաեւ վնասվածք ստացած Ջորկաեֆը: Դրությունը բարդացավ նաեւ նրանով, որ 24-րդ րոպեին կոմիս խաղի համար դաշտից հեռացվեց Տյերի Անրին: Առանց այն էլ ոչ լավ մարզավիճակում գտնվող ֆրանսիացիները լրացուցիչ դժվարությունների հանդիպելով, այս անգամ էլ չկարողացան արժանավայել խաղ ցուցադրել: Ընդհանրապես խաղը հարուստ չէր գոլային պահերով: Առաջին խաղակեսում կարող էր աչքի ընկնել Ռեկոբան, որի հարվածից հետո Բարտեզը մի կերպ գնդակը հանեց անկյունային: Ուրուգվայցիներին էլ գոլից փրկեց դարպասի ձողը:

Նույն սցենարով ընթացած 2-րդ խաղակեսում էլ թիմերը հաջողության չհասան, թեեւ արդեն ավելացված ժամանակում նախ Վիլտորդի հարվածից հետո ուրուգվայցիների դարպասապահը հետ մղեց գնդակը, ապա Բարտեզը թիմին փրկեց պարտությունից: Եվ այսպես, առաջնությունում առաջին անգամ դարպասները մնացին անառիկ: Այժմ չեմպիոնի հետագա ճակատագիրը կախված է հունիսի 11-ին դանիացիների հետ կայանալիք խաղի արդյունքից: Վճռորոշ նշանակություն ունի նաեւ Սենեգալ-Ուրուգվայ հանդիպումը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դանիա	2	1	1	0	3-2	4
2. Սենեգալ	2	1	1	0	2-1	4
3. Ուրուգվայ	2	0	1	1	1-2	1
4. Ֆրանսիա	2	0	1	1	0-1	1

Տուգանք դերասանության համար

ՖԻՖԱ-ի կարգապահական կոմիտեն բրազիլացի Ռիվալդոյին տուգանել է 11,5 հազար շվեյցարական ֆրանկով (7,8 հազար դոլար) այն բանի համար, որ նա ձեւացրել էր, թե իբր թուրք ֆուտբոլիստի գնդակով հարվածից հետո վնասվածք է ստացել: Հիշեցնենք, որ այդ արարքի համար թուրք ֆուտբոլիստ Ունսալը երկրորդ դեղին քարտը ստացավ եւ հեռացվեց դաշտից: Իսկ ահա Ռիվալդոյի նկատմամբ բացի տուգանքից, այլ պատժամիջոց չկիրառվեց:

Ռիվալդոն հայտարարել է, որ չի զղջում իր արարքի համար: Ըստ նրա, նման արարքները ֆուտբոլում պատահում են: Ռիվալդոն համոզված է, որ այս առաջնությունում նման դեպքերը կկրկնվեն:

Իրավիճակը գնալով սրվում է

Խմբային մրցաշարում սկսվել են երկրորդ տուրի հանդիպումները

«Է» խումբ

Նվազագույն հաշվով

Կամերուն-Ս. Արաբիա՝ 1-0 (0-0)

Էտու (66):

Մասնագետներից շատերը ենթադրում էին, թե կամերունցիներն էլ Սաուդյան Արաբիայի հավաքականին խոշոր հաշվով կհաղթեն: Բայց ի պատիվ մրցակցի, նախորդ խաղում գերմանացիներից կրած խոշոր հաշվով պարտությունից հետո արաբ ֆուտբոլիստներն անհրաժեշտ հեռեւության էին հանգել՝ վերադասավորելով ուժերը: Կամերունցիները չնայած խաղային եւ տարածքային առավելությանը, բավական ժամանակ չէին կարողանում հաջողության հասնել: Եվ միայն 66-րդ րոպեին կամերունցիներին հաջողվեց գրավել մրցակցի դարպասը: Խորքից փոխանցում ստանալով, Էտուն մեն-մենակ դուրս եկավ դարպասապահի դիմաց եւ խփեց հաղթական գնդակը: Այս հաղթանակի շնորհիվ հաջորդ փուլ դուրս գալու կամերունցիների հնարավորությունները զգալի աճեցին: Հունիսի 11-ին կամերունցիները մրցելու են գերմանացիների, իսկ իռլանդացիները Սաուդյան Արաբիայի հավաքականի հետ:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Գերմանիա	2	1	1	0	9-1	4
2. Կամերուն	2	1	1	0	2-1	4
3. Իռլանդիա	2	0	2	0	2-2	2
4. Ս. Արաբիա	2	0	0	2	0-9	0

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Հայրապետյանը (Նեմեց Ռուբո) ֆեդերացիայի նախագահ

Երեկ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանն անցկացվեց Ֆուտբոլի Հայաստանի Ֆեդերացիայի 6-րդ արտահերթ կոնֆերանսը, որի օրակարգն ընդգրկում էր կազմակերպության ղեկավարության անցած չորս տարվա աշխատանքների մասին հաշվետվությունը, կանոնադրական փոփոխությունների հաստատումը, Ֆեդերացիայի նոր նախագահի ընտրություններն ու գործկոմի նոր կազմի հաստատումը: Հաշվետվությամբ հանդես եկավ Ֆեդերացիայի գործադիր տնօրեն Արման Հովհաննիսյանը: Այնուհետեւ փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրվեց Ֆեդերացիայի նոր նախագահը: Չայնի իրավունք ունեցող 57 պատգամավորներից 52-ը քվեարկել էին Ռուբեն Հայրապետյանի եւ միայն չորսը՝ Արկադի Անդրեասյանի օգտին (1 քվեաթերթիկ անվավեր էր ճանաչվել): Այսպիսով, ձայների գերակշիռ առավելությամբ հայտնի գործարար, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի հիմնադիր Ռուբեն Հայրապետյանն ընտրվեց Ֆուտբոլի հանրապետական Ֆեդերացիայի նոր նախագահ: Հաստատվեց նաեւ նախագահի առաջադրած 15 հոգուց բաղկացած գործկոմի նոր կազմը:



Շնորհավորելով Ռուբեն Հայրապետյանին՝ Ֆեդերացիայի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ, հուսով ենք, որ նա նույն եռանդով ու ջանասիրությամբ կվերաբերվի իրեն վստահված պատասխանատու աշխատանքին, ինչպես ժամանակին «Փյունիկում» էր: Նշենք, որ անկախության տարիներին ֆուտբոլի 33 ֆեդերացիան 4-րդ նախագահն է գլխավորում: 1992-1994 թթ. Ֆեդերացիայի նախագահը Նիկոլայ Ղազարյանն էր, այնուհետեւ նախագահի պաշտոնը զբաղեցրեց Արմեն Սարգսյանը, իսկ 1998 թ. մայիսի 12-ին կայացած կոնֆերանսում նախագահ ընտրվեց Սուրեն Աբրահամյանը:

Գլխավոր մրցանակը Կասպարովին

Մոսկվայում վերջնագիծը հասավ շախմատի Գրան պրիի երկրորդ փուլի մրցաշարը: Եզրափակիչում գլխավոր մրցանակը վիճարկեցին Գարրի Կասպարովն ու Թեյմուր Ռաջաբովը: Առաջին պարտիայում սպիտակներով խաղացող Կասպարովը 25-րդ քայլին հաղթեց իր պատանի մրցակցին: Երկրորդ պարտիան ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, Կասպարովն առաջին անգամ մասնակցելով Գրան պրիի խաղարկությանը, դարձավ մրցաշարի հաղթող: 3-4-րդ տեղերի համար պայքարում Խալիֆմանը 1,5-0,5 հաշվով պարտության մատնեց Բելյավսկուն: Գրիշչուկը լրացուցիչ մրցախաղում հաղթելով Իվանչուկին (2,5-1,5), գրավեց 5-րդ տեղը: 7-8-րդ տեղերի համար պայքարն ավարտվեց Իլյա Սմիրինի հաղթանակով, որը պարտության մատնեց Եվգենի Բարեեւին (3-2): Վլադիմիր Հակոբյանն այս անգամ պարտվեց Կասիմջանովից (0,5-1,5) եւ բավարարվեց 10-րդ տեղով: Հաջորդ տեղերում են Պոնոմարյովը, Պոլգարը, Օնիշչուկը, Դրեեւը, Լոթյեն եւ Սուտովսկին:

Չախովիչը լքեց առաջնությունը

Սլովենիայի հավաքականի խաղացող Զլատկո Չախովիչը հեռացվել է թիմից եւ լքել աշխարհի առաջնության մրցավայրը: Պատճառը հավաքականի գլխավոր մարզիչ Սրեչկո Կատանեցի հետ խաղում ծագած կոնֆլիկտն է: Իսպանիայի հավաքականի հետ խաղում մարզիչը լավագույն խաղացողներից մեկին փոխարինել էր, ինչը Չախովիչի վրդովմունքն էր առաջացրել եւ ֆուտբոլիստը վիրավորել էր մարզչին: Կոնֆլիկտի հարթմանն իրենց մասնակցությունն էին ունեցել երկրի նախագահ Միլան Կուչանը եւ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուդոլֆ Չավրլը: Թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող կավարտվի, սակայն երեկ պարզ է դարձել, որ ֆուտբոլիստը հեռացվել է հավաքականից: Իր հերթին հավաքականի գլխավոր մարզիչ Սրեչկո Կատանեցը հայտարարել է, որ զարմացած է իր հանդեպ ֆուտբոլիստի վերաբերմունքից եւ աշխարհի առաջնությունից հետո հրաժարական է տալու: Սա հավաքականից ֆուտբոլիստների հեռացման արդեն 2-րդ դեպքն է: Հիշեցնենք, որ մինչ առաջնության մեկնարկը մարզչի հետ ունեցած կոնֆլիկտի պատճառով թիմից հեռացել էր Իռլանդիայի հավաքականի ավագ Ռոյ Քինը:

Օնոպկոյին հոբելյան է սպասում

Ռուսաստանի հավաքականի ավագ, 32-ամյա Վիկտոր Օնոպկոն աշխարհի առաջնությունում կարող է յուրօրինակ հոբելյան նշել: Թունիսի հավաքականի հետ խաղն ազգային հավաքականում Օնոպկոյի 98-րդ հանդիպումն էր: Այս ցուցանիշով նա գերազանցեց հանրահայտ դարպասապահ Ռինատ Դասաեւի արդյունքը: Այնպես որ, Բելգիայի հավաքականի հետ հունիսի 14-ին կայանալիք խաղն Օնոպկոյի համար հոբելյանական 100-րդ հանդիպումը կլինի: Նշենք, որ նախկին ԽՍՀՄ հավաքականում անցկացրած խաղերի քանակով ռեկորդակիրն Օլեգ Բլոխինն է (112):

Ամենաերիտասարդ ֆուտբոլիստները

Թունիսի հավաքականի հետ խաղի 55-րդ րոպեին խաղադաշտ դուրս գալով, ռուսաստանցի Դմիտրի Սիչովը յուրօրինակ ռեկորդ սահմանեց: Նա դարձավ ռուսաստանցի ֆուտբոլիստներից ամենաերիտասարդը (18 տարեկան 222 օրական), որ հանդես է եկել ֆուտբոլի աշխարհի առաջնությունների եզրափակիչ փուլում: Մինչ այդ ռեկորդային էր Սերգեյ Ռոդիոնովի ցուցանիշը, որը 1982 թ. Նոր Զելանդիայի հետ խաղի օրը 19 տարեկան 289 օրական էր:

Նշենք, որ աշխարհի առաջնությունների ամենաերիտասարդ մասնակիցը Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլիստ Նորման Ուայսսայդն է, որը 1982 թ. Հարավսլավիայի հետ խաղի օրը 17 տարեկան 41 օրական էր: Աշխարհահռչակ Պելեն ամենաերիտասարդ աշխարհի չեմպիոնն ու գոլի հեղինակն է: 1958 թ. նա 17 տարեկան 235 օրական էր, երբ Բրազիլիայի հավաքականի կազմում դարձավ աշխարհի չեմպիոն: Նրանից հետո իտալացի Զուզեպե Բերգոմիին է հաջողվել երիտասարդ տարիքում (18 տարեկան 195 օրական) նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը (1982 թ.): Պելեից հետո աշխարհի առաջնություններում գոլ խփած ամենաերիտասարդ ֆուտբոլիստն անգլիացի Մայքլ Օուենն է (18 տարեկան 183 օրական): Նա 1998 թ. գրավել էր Թունիսի հավաքականի դարպասը:

Ֆուտբոլիստներն առայժմ «մաքուր» են

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունների պատմության մեջ առաջին անգամ հանդիպումների ավարտից հետո վիճակահանությամբ մրցակից թիմերի 2-ական ֆուտբոլիստ ենթարկվում է դոպինգ ստուգման: Ինչպես տեղեկացրել է ՖԻՖԱ-ի բժշկական հանձնախմբի անդամ Իրժի Դվորժակը, առայժմ վերցված բոլոր անալիզներն էլ բացասական արդյունք են տվել, ինչը վկայում է, որ ֆուտբոլիստները զերծ են մնում արգելված դեղամիջոցներ օգտագործելուց:

Բաժինը վարում է ԱՇՈՏ ՏԱՅԲԱՊԵՏՅԱՆԸ

Շոու-բիզ

ՇԱԲԱԹՎԱ ԼՈՒՐԸ

Էլիզաբեթ թագուհու տարեդարձը

Հունիսի 3-ին Բեքինգեմյան պալատում էլիզաբեթ 2-րդի թագադրության 50-րդ տարեդարձի կապակցությամբ կայացավ բացօթյա մեծ համերգ, որին մասնակցեցին շոու բիզնեսի ամենահայտնի դեմքերը: Փոլ Մակարտնին, անխոս, օրվա հերոսն էր: Նա գլխավորեց բոլոր ասպետերից բաղկացած երգչախումբը, որը կատարեց Hey Jude եւ All you need is love երգերը:

Համերգը բացեց «Քուին» խմբի կիթառահար Բրայան Մեյը God save the Queen երգի կատարումով Բեքինգեմյան պալատի տանիքից, որից հետո նրան ու Ռոջեր Թեյլորին միացավ նորահայտ պոպ երգիչ Ուիլ Յանգը Radio Ga Ga, We will rock you, We are the champions եւ Bohemian Rhapsody անմահ ստեղծագործությունները կատարելու նպատակով:

Ուշագրավ էր Օզի Օզբորնի ելույթը: Նա բեմ ներխուժեց, երբ դեռ հաղորդավարը չէր ներկայացրել իրեն, ապա ներողություն խնդրելով, դադարեց վազել բեմի երկայնքով: «Ասված թագուհուն օրհնի: Ես սիրում եմ բոլորիդ», ասաց նա եւ անցավ Paranoid երգի կատարմանը:

Շոուի մասնակիցները ականատես եղան եզակի երաժշտական համագործակցությունների, այդ թվում «Բիչ Բոյզ» խմբից Բրայան Ուիլսոնի եւ էրիկ Քլեփթոնի համատեղ ելույթը իռլանդական «Քորզ» խառյակի հետ: Ելույթ ունեցան նաեւ էլթոն Ջոնը, Ռոդ Սթյուարդը, Սթիվ Ուինվուդը, Ֆիլ Քոլինզը, Ջո Կոկերը, Թոմ Ջոնսը, էնի Լենոքսը, Թլիֆ Ռիչարդը, Բրայան Ադամսն ու շատ ուրիշներ:

Էլթոն Ջոնը՝ ֆուտբոլասիրող

Վերջերս էլթոն Ջոնը հրաժարվել է անգլիական «Վոքֆորդ» ֆուտբոլի ակումբի նախագահի պաշտոնից: Դեռ մանկությունից լինելով ֆուտբոլի մոլեռանդ երկրպագու էլթոն Ջոնը շատ բան է արել այս ակումբի համար: 76 թվականից ի վեր նա երկու անգամ նշանակվել է նախագահ: «Վոքֆորդի» գործադիր տնօրենի Թիմ Շոի կարծիքով, առանց երգչի աջակցության եւ ներդրումների ակումբը չէր կարողանա հաղթահարել ֆուտբոլի աշխարհում այսօր տիրող դժվարություններն ու մրցակցությունը:

Իսկ էլթոն Ջոնն իր հրաժարականը բացատրում է ժամանակի սղությամբ: «Ֆուտբոլում կատարվող հսկայական փոփոխությունները ակումբի համար անհրաժեշտ են դարձնում այնպիսի ղեկավարի ընտրություն, որը կկարողանա ավելի շատ ժամանակ հատկացնել ակումբին, քան ես եմ ի վիճակի անել: Հուսով եմ նրանք կգտնեն համապատասխան մարդ այս պաշտոնի համար: Ես թե նրանց, թե բոլոր երկրպագուներին ամենայն բարիք եմ մաղթում», ասել է էլթոնը հարցազրույցի ժամանակ:

Երգիչ՝ տիեզերքում

«էն Սինք» խմբի անդամ Լենս Բեյսը հայտարարել է, որ ինքը բավականին լավ առողջական վիճակում է եւ կարող է իրեն թույլ տալ իրականացնելու տիեզերք ճանապարհորդելու երազանքը: Բեյսը ամիսներ շարունակ մարզվում էր եւ նույնիսկ որսի վիրահատություն է տարել, որպեսզի կարողանա հանձնել ռուսական տիեզերագնացների տեստերը: Սակայն ֆիզիկական պատրաստվածությունը դեռ բավական չէ «Սոյուզ» տիեզերանավով ճանապարհորդելու համար: Դեռ հարց է՝ կկարողանա՞ երգիչը վճարել տոմսի գինը՝ 20 միլիոն դոլարը: Բացի դրանից, դեռեւս ստացված չէ ռուսական տիեզերական գործակալության համաձայնությունը, նույնիսկ ավելին՝ գործակալության ներկայացուցիչները իրենց հերթին հայտարարել են, որ մտադրություն չունեն Լենս Բեյսին տեղ տրամադրել հոկտեմբերին կայանալիք տիեզերական ուղեւորությունում, քանի որ առ այսօր նրանք չեն ստացել ոչ մի գրավոր դիմում մասնակցության խնդրանքով ոչ Լենս Բեյսի, ոչ էլ նրա ներկայացուցչի կողմից:

Ըստ Բեյսի ներկայացուցիչ Դեյվիդ Կրիֆի, հաջորդ շաբաթ տեղի է ունենալու արարողություն, որի ժամանակ էլ Լենսի մասնակցության հարցը փաստաթղթերով վավերացվելու է:

Ստալոնեի հինգերորդ ձավակը

